

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Այս նյութը մշակվել է **Միացյալ Թագավորության միջազգային զարգացման շրջանակում**¹ ՄԹ կառավարության ֆինանսավորմամբ, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի հետ համագործակցությամբ։ Ուղեցույցում արտահայտված կարծիքները հեղինակներին են և հնարավոր է, որ դրանք ոչ միշտ համընկնեն ծրագիրը ֆինանսավորող կազմակերպությունների, ՄԹ կառավարության պաշտոնական քաղաքականության կամ պաշտոնական դիրքորոշման հետ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Ի՞նչ է իրենից ներկայացնում փողերի լվացումը	6
Որո՞նք են փողերի լվացման հիմնական փուլերը	12
Ինչպե՞ս է կատարվում փողերի լվացումը	14
Ի՞նչ է իրենից ներկայացնում ահաբեկչության ֆինանսավորումը և ինչպե՞ս է այն կապված փողերի լվացման հետ	16
Ի՞նչ է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը	19
Ինչպիսի՞ն է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի համակարգը	25
Ի՞նչ է իրենից ներկայացնում ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգը	37
Ինչպե՞ս ձևավորել ՓԼ/ԱՖ համապատասխանության մշակույթը և ո՞վ է դրա պատասխանատուն	39
Պաշտպանության ո՞ր գծին է պատկանում ՓԼ/ԱՖ ռիսկի կառավարումը	47
Ի՞նչ դերակատարում ունի ներքին աուդիտը ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցում	51
Ի՞նչ դերակատարում ունի արտաքին աուդիտը ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցում	53
Ինչպե՞ս է կատարվում ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատումն ու կառավարումը	54
Ինչպե՞ս է կատարվում հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը	59
Ինչպե՞ս է բացահայտվում կասկածելի գործարքը	68
Ինչպե՞ս է կատարվում տեղեկությունների և փաստաթղթերի հավաքումը, հաշվառումն ու պահպանումը	72
Ե՞րբ է անհրաժեշտ ներկայացնել ՓԼ/ԱՖ հաշվետվություն	74
Օգտագործված գրականության ցանկ	76

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական բարեվարքությունը համակարգային բարեվարքության կարևոր բաղադրիչն է: Այն նշանակում է, որ ֆինանսական համակարգը գործում է ազնիվ, թափանցիկ և հաշվետու, մասնավոր հատվածի գործունեությունն օրինավոր է և իրականացվում է օրենսդրական պահանջներին ու էթիկական բարձր չափանիշներին համապատասխան:

Ֆինանսական բարեվարքությունը միտված է բարձրացնել տնտեսական համակարգի հուսալիությունը և դրա նկատմամբ վստահությունը: Այն հնարավորություն է տալիս ներդրողներին, կարգավորող մարմիններին և հանրությանը գնահատել համակարգի ֆինանսական առողջությունն ու բացահայտել հնարավոր ռիսկերը:

Ֆինանսական բարեվարքության բացակայությունը կարող է՝

- ❖ ապակայունացնել տնտեսական համակարգը,
- ❖ բարձրացնել ֆինանսական համակարգի խոցելիությունը և ճգնաժամերի ծագման հավանականությունը,
- ❖ խաթարել ներդրումային միջավայրը՝ նվազեցնելով կառուցողական և խրախուսելով քայքայիչ կապիտալի հոսքերը,
- ❖ նպաստել երկրի հեղինակության ռիսկի ծագմանը,
- ❖ ընդլայնել ոչ ֆորմալ հատվածը,
- ❖ թուլացնել ինստիտուտները:

Կառուցողական կապիտալը ֆինանսական հոսքեր են, որոնք լավ կառավարվում են ինչպես ֆինանսավորման աղբյուրում, այնպես էլ նպատակակետում: Այն նպաստում է շուկաների զարգացմանը և աջակցում օրենքի գերակայությանը, խթանում է թափանցիկությունը և բարելավում կառավարումը՝ կառավարությունների վրա դնելով մասնավոր հատվածի համար հավասար պայմաններ ապահովելու պատասխանատվությունը: Կառուցողական ներդրումներն ուղղված են դեպի կայուն և արդար տնտեսական աճին աջակցող ընկերությունները և տեղական շուկաները: Դա նաև աջակցում է կայուն շուկայական ինստիտուտների և լավ կառավարման զարգացմանը:

Քայքայիչ կապիտալը ֆինանսական հոսքեր են, որոնց հատուկ չեն թափանցիկությունը, հաշվետվողականությունը և շուկայական կողմնորոշումը: Ներդրումների այս տեսակը խաթարում է վստահությունն ինստիտուտների նկատմամբ, թուլացնում է օրենքի գերակայությունը, խթանում է ոչ թափանցիկ գործելաոճը: Ընդհանուր առմամբ, քայքայիչ կապիտալի հիմնական սպառնալիքն ուղղված է ազատ, արդար, ներառական շուկաների ձևավորմանը: Այն ձևավորում է թունավոր գործարար միջավայր, որը խեղդում է տեղական բիզնեսի նորարարությունը, նվազեցնում է հավասարությունը և խոչընդոտում զարգացման հեռանկարները:

Ֆինանսական բարեվարքությունն ընդգրկում է նաև փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման, ոչ օրինական ֆինանսական հոսքերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցներն ու գործելաոճը:

ԻՆՉ Է ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ

Փողերի վացումն ապօրինի աղբյուրներից կամ հանցավոր գործունեության արդյունքում ստացված ակտիվների աղբյուրը թաքցնելու և այն մաքուր աղբյուրի վերածելու գործընթաց է՝ նպատակ ունենալով խուսափել քրեական հետապնդումից, պատասխանատվությունից և ոչ օրինական միջոցների բռնագրավումից:

Սա լուրջ ֆինանսական հանցագործություն է, որի շարժառիթն է «սև փողը» «սպիտակի» վերածելը կամ «կեղտոտ փողերի վացումը»: Ըստ ամերիկացի գիտնական Ջեֆրի Ռոբինսոնի՝ «փողերի վացում» եզրույթը լայն տարածում է գտել սոսկ այն պատճառով, որ ճշգրտորեն արտացոլում է հանցավոր գործունեության էությունը, այն է՝ հանցավոր եկամուտներն օրինական եկամուտներին խառնելով՝ դրանք օրինականացնել և թաքցնել հանցագործության հետքերը:

Կարելի է ասել, որ փողերի վացումը ֆինանսական համակարգի շահագործումն է՝ թաքցնելով կամ քողարկելով հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի կամ միջոցների գոյությունը, աղբյուրը, տեղաշարժը, նպատակակետը կամ ապօրինի լինելը և նպատակ ունենալով օրինականացնել դրանց գոյությունը:

«Փողերի վացում» հասկացության առաջին նկարագիրը տրվել է Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1988թ.-ի կոնվենցիայում (Վիեննայի կոնվենցիա): Հարկ է նշել, որ Կոնվենցիան ուղղակիորեն չի օգտագործել «փողերի վացում» եզրույթը, սակայն դրանում առաջին անգամ թվարկվել են հանցագործության ժամանակակից նկարագրին համապատասխանող հիմնական գործողությունները: Դրանք են՝

ա) Սեփականության փոխարկումը կամ փոխանցումը, եթե հայտնի է, որ այդ սեփականությունը ձեռք է բերվել՝

- ❖ հանցագործություն կամ հանցագործություններ համարվող գործողությունների արդյունքում կամ
- ❖ նման հանցագործությանը կամ հանցագործություններին մասնակցելու արդյունքում սեփականության հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով կամ
- ❖ նման հանցագործության կամ հանցագործությունների կատարման մասնակցին օգնություն ցուցաբերելու նպատակով, որպեսզի վերջինս կարողանա խուսափել իր կողմից կատարված գործողությունների համար սահմանված պատասխանատվությունից,

բ) Սեփականության իրական բնույթի, աղբյուրի, գտնվելու վայրի, տնօրինման կարգի, տեղափոխման, դրա նկատմամբ իրական իրավունքների կամ պատկանելության թաքցնումը և պարտակումը, եթե հայտնի է, որ այդ սեփականությունը ձեռք է բերվել՝

- ❖ հանցագործության կամ հանցագործություններ համարվող գործողությունների կամ
- ❖ նման հանցագործությանը կամ հանցագործություններին մասնակցելու արդյունքում:

Այսպիսով, փողերի լվացումը հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացումն է, իսկ վերջինն էլ՝ վերը նշված մեկ կամ մի քանի գործողությունների կատարումը:

Փողերի լվացման՝ որպես հանցագործության հանրային բարձր վտանգավորությունը պայմանավորված է՝

- ❖ **դրա անդրազգային բնույթով**, որը հնարավորություն է տալիս թաքցնել հանցավոր ճանապարհով ստացված միջոցների ծագման աղբյուրը՝ դրանք օրինական շրջանառության մեջ դնելով մեկ այլ երկրում: Սա լուրջ խոչընդոտներ է ստեղծում հանցագործության բացահայտման համար, ինչը ենթադրում է, որ փողերի լվացման դեմ արդյունավետ պայքարը հնարավոր է միայն միջազգային պատշաճ համագործակցության պայմաններում:
- ❖ **այլ հանցագործությունների (կոռուպցիա, թմրաբիզնես, մարդկանց առևտուր, զենքի ապօրինի շրջանառություն, ահաբեկչություն և այլն) հետ կապով**: Մի կողմից փողերի լվացմանը նախորդում է մեկ այլ հանցավոր գործունեություն, քանի որ օրինականացման է ենթակա միայն հանցավոր գործունեության (նախորդող հանցագործություն) արդյունքում ստացված գույքը, իսկ մյուս կողմից օրինականացված միջոցները կարող են ֆինանսապես սնուցել այլ հանցագործությունները ևս (օրինակ՝ ֆինանսավորել ահաբեկչությունը),

ՖԱԹՖ-ի կողմից սահմանվել է փողերի լվացմանը նախորդող հետևյալ հանցագործությունների ցանկը՝

- ❖ մասնակցություն կազմակերպված հանցավոր խմբում և բռնաշորթմանը,
- ❖ ահաբեկչություն, այդ թվում՝ ահաբեկիչների ֆինանսավորում,
- ❖ մարդկանց թրաֆիքինգ և միգրանտների ապօրինի ներմուծում,
- ❖ սեռական շահագործում, այդ թվում՝ երեխաների սեռական շահագործում,
- ❖ թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառություն,
- ❖ զենքի ապօրինի շրջանառություն,
- ❖ գողացված և այլ ապրանքների ապօրինի շրջանառություն,
- ❖ կոռուպցիա և կաշառակերություն,
- ❖ խարդախություն,
- ❖ արժույթի կեղծում,
- ❖ ապրանքների կեղծում և ապրանքահեռություն,
- ❖ բնապահպանական հանցագործություններ (օրինակ՝ վայրի կենդանական և բուսական աշխարհի պահպանվող տեսակների, թանկարժեք մետաղների և քարերի, այլ բնական ռեսուրսների կամ թափոնների հանցավոր ձեռքբերում, արդյունահանում կամ առևտուր),
- ❖ սպանություն, ծանր մարմնական վնասվածք,
- ❖ առևանգում, ազատության ապօրինի սահմանափակում և պատանդներ վերցնել, կողոպուտ կամ գողություն,
- ❖ մաքսանենգություն (այդ թվում՝ մաքսային և ակցիզային վճարների ու տուրքերի հետ կապված),
- ❖ հարկային հանցագործություններ (ուղղակի և անուղղակի հարկերի հետ կապված),
- ❖ շորթում,
- ❖ փաստաթղթերի կեղծում,
- ❖ ծովահենություն, և
- ❖ ինսայդերական գործունեություն և շուկայի չարաշահում:

- ❖ **օրենսդրական արգելքների նկատմամբ ճկունությամբ և հարմարվողականությամբ, օրինազանցների հնարամտությամբ, ինչպես նաև նրանց կողմից գիտատեխնիկական և տեխնոլոգիական զարգացումներին արագ արձագանքմամբ ու դրանց օպերատիվ օգտագործմամբ,**
- ❖ **կազմակերպվածությամբ.** փողերի վաճառման ուղղված գործառնությունները մանրամասն կազմակերպվում և պլանավորվում են, դրանց իրականացման ընթացքում հաշվի են առնվում բանկային և առևտրային գաղտնիքների պահպանման մասին օրենսդրությունները, օֆշորային օրենսդրությունը, մշակվում են փաստաթղթեր, որոնք «օրինական» տեսք են տալիս հանցագործների կողմից կնքվող գործարքներին:

Պատմական ակնարկ

Գոյություն ունի լեգենդ, համաձայն որի՝ «**փողերի վաճում**» եզրույթը ծագել է ԱՄՆ-ում 20-30-ական թվականներին, երբ Չիկագոյի մաֆիան մեծ եկամուտներ էր ստանում ակոհոլի անօրինական առևտրից և այլ աղբյուրներից: Գործող սխեմայով այդ եկամուտները պաշտոնապես գրանցվում էին որպես վաճառքների ցանցից ստացվածներ: Լվացքի ծառայությունների համար վճարումը կատարվում էր կանխիկ, ուստի անհնար էր հետևել, թե իրականում քանի մարդ է այդ ծառայություններից օգտվել: Սա գանգստերներին թույլ էր տալիս հանցավոր փողերը «խառնել» վաճառքների օրինական եկամուտներին, ինչի արդյունքում անօրինական փողերը վերածվում էին օրինականի: Լվացքատների հետ առնչություն ունենալու պատճառով գործընթացը կոչվեց «փողերի վաճում»: Սակայն սա ընդամենը լեգենդ է:

1931թ.-ին Միացյալ Նահանգների հանցավոր աշխարհին առանձնակի շահագրգռվածություն էր դրսևորում իր եկամուտները պաշտոնապես մաքրելու հարցում, հատկապես՝ հանցավոր աշխարհի պարագլուխ Ալ Կապոնեի ձերբակալման ֆոնին: Վերջինս մեղադրվում էր եկամուտները թաքցնելու և հարկերի վճարումից խուսափելու մեջ: Պետական գործակալները կարողացան ապացուցել, որ նրա ծախսերն ավելին են, քան պաշտոնական եկամուտները, ինչը վկայում էր հարկումից եկամուտները թաքցնելու մասին:

Մեկ այլ խոշոր հանցագործ Մեյր Լանսկին (ի ծնե՝ Մեյր Սուխոմյանսկի), ով հայտնի է «մաֆիայի հաշվապահ» ծածկանունով, հեղինակեց հանցավոր եկամուտների վաճառման սեփական սխեմաները:

Ըստ նրա սկզբնական սխեմայի՝ փողերի լվացումը տեղի էր ունենում կազինոների միջոցով. կեղտոտ փողերը, որոնք իբր թե հաճախորդների կողմից տանույ տված փողեր էին, «խառնվում էին» ԱՄՆ-ում և Կուբայում գործող խաղատների եկամուտներին: Հետագայում Լանսկին բանկերի միջոցով ստեղծեց նոր սխեմա. նա անանուն հաշիվներ էր բացում շվեյցարական բանկերում և դրանցում մուտքագրում զգալի գումարներ, այնուհետև այդ նույն բանկերից ստանում էր վարկեր, որոնք ցույց էր տալիս որպես եկամուտի աղբյուր: Վարկերն էլ իրենց հերթին մարվում էին անանուն հաշիվներում տեղաբաշխված գումարների հաշվին: Այսպիսով, կեղտոտ փողերը, անցնելով բանկերի միջով, դառնում էին մաքուր կամ օրինական:

Մամուլում «փողերի լվացում» եզրույթն առաջին անգամ կիրառվել է միայն 1973թ.-ին բրիտանական The Guardian թերթի կողմից Ուոթերգեյթի սկանդալի համատեքստում: Լրագրողական հետաքննության արդյունքում բացահայտվեց, որ Հանրապետական կուսակցության նախընտրական ոչ պաշտոնական հիմնադրամին հանգանակված հաճախ անօրինական ծագում ունեցող միջոցներն ամերիկացի և մեքսիկացի դրածո անձանց հաշիվների միջոցով մուտքագրվել էին կուսակցության պաշտոնական հիմնադրամ:

Ինչ վերաբերում է իրավական պրակտիկային, ապա դրանում «փողերի լվացում» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է 1982թ.-ին «Միացյալ Նահանգներն ընդդեմ \$4,255,625.39-ի (551 F Supp.314)» գործում, որտեղ կոլումբիական Sonal ֆիկտիվ ընկերությունը Capital Bank-ի (Մայամի, ԱՄՆ) իր հաշվի միջոցով ԱՄՆ-ից Կոլումբիա էր արտահանում թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված փողերը, իսկ ոմն Կառլոս Մոլինան սև շուկայում կոորդինացնում էր դրանց փոխանակումը պետյի (Կոլումբիայում հոգ չէին տանում փողի ծագման մասին): Դրանից հետո կանխիկ գումարները վերադարձվում էին ԱՄՆ, որտեղ դրանք մուտքագրվում էին ամերիկյան հեղինակավոր ընկերությունների հաշիվներին: Այնուհետև Մոլինան ընկերություններից ստանում էր տարբեր գումարների չեկեր:

Ըստ այս սխեմայի՝ «լվացվել է» ավելի քան 200 միլիոն դոլար, սակայն ամերիկյան իշխանությունները կարողացել են հետևել դրանցից ընդամենը 4 միլիոն դոլարին:

Այս դատական գործի պահին փողերը լվացումն ԱՄՆ-ում դեռևս քրեականացված չէր, հետևաբար Միացյալ Նահանգները ստիպված էին հայցը կառուցել՝ հիմնվելով թմրամիջոցների ոլորտի օրենսդրության վրա, որը թույլ էր տալիս քաղաքացիական գործի շրջանակներում բռնագրավել թմրամիջոցների հետ կապված հանցագործություններից առաջացած ակտիվները:

Այս գործից ընդամենը չորս տարի անց՝ 1986թ.-ին, ընդունվեց փողերի լվացումը քրեականացնող ԱՄՆ առաջին օրենքը՝ Փողերի լվացման նկատմամբ վերահսկողության մասին օրենքը, որը փողերի լվացումը դարձրեց դաշնային հանցագործություն:

2001թ.-ի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո փողերի լվացման դեմ պայքարի մարմինների ուշադրության կենտրոնում հայտնվեցին նաև ահաբեկչության ֆինանսավորման համար օգտագործվող փողերը:

ՈՐՈՂՔ ԵՆ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԽԵՐԸ



աստացի վերհանված սխեմաների հիման վրա փորձագետների կողմից մշակվել են փողերի լվացման տիպային որոշ մոդելներ, որոնք գործնականում կարող են դրսևորվել նաև համակցության մեջ: Դրանցից առավել հայտնին եռաստիճան մոդելն է, որը ներառում է փողերի լվացման գործընթացի հետևյալ փուլերը՝

1. **Տեղաբաշխում** (placement),
2. **Շերտավորում** (layering),
3. **Ինտեգրում** (integration):



Տեղաբաշխումը հանցավոր ճանապարհով ստացված միջոցները (հաճախ ֆինանսական) որևէ հաստատության միջոցով օրինական տնտեսական (հաճախ ֆինանսական) համակարգ առաջին անգամ մտցնելն է, օրինակ՝ դրանք ավանդ դնելու, արժեթղթեր կամ այլ ակտիվներ ձեռք բերելու միջոցով՝ երբեմն միջոցները մասնատելով ավելի փոքր գումարների, որպեսզի դրանք կասկած չհարուցեն կամ չգերազանցեն պարտադիր հաշվետվություն տրամադրելու համար նախատեսված սահմանաչափը: Տեղաբաշխման նպատակով կարող են կատարվել այնպիսի գործառնություններ, ինչպիսին է մեկ արժույթի փոխարկումը մեկ այլ արժույթի կամ վճարային գործիքների, օրինակ՝ չեկերի:

Շերտավորումը ենթադրում է գործառնություններ, որոնք նպատակ են հետապնդում հանցավոր եկամուտները հեռացնել դրանց ծագման աղբյուրից՝ վերջինիս բացահայտումը դժվարացնելու համար: Սովորաբար դա իրականացվում է անդրսահմանային ֆինանսական գործարքների միջոցով՝ օգտագործելով «մասնագիտացված» օֆշորային բանկեր կամ օֆշորային գոտիներում գրանցված/գործող (հաճախ գրպանային) ընկերություններ: Օֆշորային տարածքների առանձնահատկությունը ոչ միայն հարկային արտոնություններն են, այլև՝ ակտիվների սեփականատերերի գաղտնիության ապահովումը: Ընդ որում, օֆշորային գոտիներն օգտագործվում են ոչ միայն հանցավոր եկամուտների օրինականացման, այլև դրանց պահպանման համար:

Ինտեգրումը լվացված միջոցների ներդնումն է օրինական տնտեսության մեջ՝ անշարժ գույք, արժեթղթեր, արվեստի գործեր, թանկարժեք իրեր և այլ ակտիվներ ձեռք բերելով: Այս փուլում ջանքեր են գործադրվում ջնջել հանցագործության հետ սկզբնական ասոցիացիան և օգտագործել լվացված փողերն այնպես, կարծես թե դրանք ստացվել են մաքուր աղբյուրներից: Ակտիվներ ձեռք բերելու տեսանկյունից կարևորվում է երկրի կամ ոլորտի ֆինանսական բարեվարքության մակարդակը:

ԻՆՉՊԵՐՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար օգտագործվում են տարատեսակ մեթոդներ: Հանցագործների կողմից օգտագործվող մեթոդներն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ և ստեղծագործական մոտեցումներով: Կիրառվող մեթոդները բավական դինամիկ են, ընդգրկում են նոր տեխնոլոգիաներ, նոր ֆինանսական գործիքներ և հաշվի են առնում գործող իրավական մեխանիզմները:

Փողերի լվացման ուղիները միշտ զարգանում են, քանի որ հանցագործները ստեղծագործական ուղիներ են փնտրում՝ իրենց ապօրինի միջոցները լվանալու համար: Փողերի լվացման ամենատարածված մեթոդներից են.

- ❖ **Smurfing կամ կառուցվածքավորում.** փողերի լվացման մեթոդ է, որը կատարվում է անօրինական ճանապարհով ձեռք բերված միջոցները թվային կամ ֆիզիկական փոքր գումարների բաժանելու միջոցով՝ խուսափելով դրանց հայտարարագրումից և ընդհանուր առմամբ բացահայտումից: Փողերի լվացման համատեքստում Smurfing եզրույթի հեղինակն ամերիկյան փաստաբան Գրեգորի Բոլդուինն է, ով ակնարկել է կոմիկական ֆրանշիզայի հերոսներին՝ Smurf-երին, քանի որ դրանք նույնպես շատ են, գրեթե նույնական և փոքր:
- ❖ **Արտաթույթի մաքսանենգություն** (Money Muling). փողերի լվացման այս մեթոդի համաձայն՝ միջոցներն արտահանվում, ներմուծվում, տեղափոխվում են ապօրինաբար՝ շրջանցելով մաքսային հսկողությունը կամ կեղծելով մաքսային փաստաթղթերը կամ միջոցները չհայտարարագրելով կամ ոչ իր անվամբ հայտարարագրելով:
- ❖ **Խաղատներ.** ըստ այս մեթոդի՝ կանխիկով կամ խաղատան անհատական հաշվի միջոցներով գնվում են խաղանիշեր կամ խաղարկային միավորներ, որոնք երբեմն առանց խաղադրույք կատարելու փոխանակվում են խաղատան կողմից դուրս գրված չեկերով, վճարման հանձնարարականներով կամ կանխիկով: Սա հնարավորություն է տալիս ձերբազատվել միջոցների հետազոտությունից:
- ❖ **Կեղծ ընկերություններ** (Shell Companies). սովորաբար չունեն ակտիվներ, փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, փաստացիորեն գործունեություն չեն իրականացնում, սակայն օգտագործվում են դրամական փոխանցումներ կատարելու համար՝ թաքցնելով միջոցների ծագման աղբյուրը: Կեղծ ընկերությունների պետական գրանցումը հնարավոր է կատարվի կորցրած կամ գողացված անձնագրի կամ անվանական սեփականատերերի միջոցով:

Գրանցումից հետո բացվում է բանկային հաշիվ, որում կուտակվում են անկանխիկ միջոցներ՝ դրանք այլ ընկերությունների փոխանցելու կամ կանխիկացնելու նպատակով:

- ❖ **Օֆշորային հաշիվներ.** ֆինանսական միջոցները տեղաբաշխվում են փողերի լվացման դեմ պայքարի թույլ օրենսդրություն ունեցող երկրների բանկային հաշիվներում: Հարկային դրախտ հանդիսացող երկրների չբացահայտելու քաղաքականությունը լրացուցիչ ապահովություն է հաղորդում փողերի լվացման այս մեթոդին:
- ❖ **Կրիպտոարժույթներ.** առցանց գործարքներ իրականացնելու հնարավորությունը վերջերս ներդրված թվային արժույթների, օրինակ՝ բիթքոյնի միջոցով մեծացնում է փողերի լվացման հնարավորությունները: Կրիպտոարժույթների շրջանառության մեջ **«Ճանաչի՞ր հաճախորդիդ»** սկզբունքին համապատասխանելու պահանջի բացակայությունը կարող է հանդես գալ որպես փողերի լվացման հրավեր:

ԻՆՉ Է ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԻՆՉՊԵՐՍ Է ԱՅՆ ԿԱՊԿԱԾ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ՀԵՏ

Ա հաբեկչության ֆինանսավորումը ենթադրում է ահաբեկչության կազմակերպմանը կամ իրականացմանը, ահաբեկչական կազմակերպություններին կամ անհատ ահաբեկիչներին ուղղակիորեն կամ անուղղակիորեն աջակցելը միջոցների հավաքագրման կամ տրամադրման միջոցով:

ՖԱԹՖ 5-րդ Հանձնարարականով պահանջվում է, որ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների սուբյեկտների շրջանակը ներառի անձանց, ովքեր դիտավորությամբ որևէ կերպ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրում կամ հավաքագրում են միջոցներ այն անօրինական մտադրությամբ կամ այն գիտակցությամբ, որ դրանք ամբողջությամբ կամ մասամբ կօգտագործվեն Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված ահաբեկչական գործողություններ կատարելու համար ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից: Բացի վերը նշվածից, ահաբեկչության ֆինանսավորում է համարվում նաև այն անձի ճանապարհորդությունը ֆինանսավորելու նպատակով գույքի ուղղակի կամ անուղղակի, ցանկացած եղանակով տրամադրումը կամ հավաքագրումը, ով ճանապարհորդում է ահաբեկիչներ պատրաստելու համար ուսուցում իրականացնելու կամ դրանց մասնակցելու համար:

Ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորությունը կայանում է նրանում, որ՝

- ❖ երկրներն անկարող են դրա դեմ պայքարել միայնակ,
- ❖ տիրապետելով զգալի ֆինանսական ռեսուրսների՝ ահաբեկիչները դառնում են համաշխարհային ֆինանսական շուկայի խաղացողներ, ինչը նրանց թույլ է տալիս ավելի հարստանալ ինչպես օրինական, այնպես էլ ոչ օրինական ճանապարհով:


Ահաբեկչության ֆինանսավորման սպառնալիքները ճիշտ ընկալելու համար շատ կարևոր է հասկանալ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման միջև կապը:

Պետք է նշել, որ ինչպես փողերի լվացման, այնպես էլ ահաբեկչության ֆինանսավորման դեպքում հանցագործների կողմից օգտագործվում են նույնատիպ սխեմաներ և մեթոդներ:

Երկուսի դեպքում էլ ֆինանսական համակարգը շահագործվում է անօրինական նպատակներով:

Այդուհանդերձ, եթե փողերի լվացմանը մշտապես նախորդում է մեկ այլ հանցագործություն, այսինքն՝ լվացվում են հանցավոր ճանապարհով ստացված միջոցները, ապա ահաբեկչության ֆինանսավորմանը կարող են ուղղվել ինչպես հանցավոր ճանապարհով, այնպես էլ օրինական աղբյուրներից ստացված միջոցները:

Ահաբեկչական կազմակերպությունները կամ ահաբեկիչներն օգտագործում են ֆինանսական համակարգը ոչ միայն ահաբեկչության համար միջոցներ փոխանցելու, այլ նաև տարբեր ֆինանսական գործարքներ կատարելու միջոցով եկամուտներ ստանալու համար, որոնք ապագայում կարող են օգտագործվել ահաբեկչական գործողություններ ֆինանսավորելու նպատակով: Մասնավորապես, ահաբեկչական կազմակերպությունները կարող են հանցավոր գործունեության արդյունքում ստացված միջոցներով գնել անշարժ գույք կամ կատարել ներդրումներ օրինական տնտեսությունում՝ գործելով փողերի լվացման հանցանք:



Փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումն օգտագործում են ֆինանսական համակարգերի նույն խոցելիությունը՝ անանուն գործարքների հնարավորություն, թափանցիկության ոչ պատշաճ մակարդակ, իրավապահ մարմինների թուլությունները, որոնք խոչընդոտում են արդյունավետ հետաքննության ու հետապնդման իրականացումը:

ԻՆՉ Է ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ



ողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարը ազգային և միջազգային իրավական ու ինստիտուցիոնալ կառուցակարգերի ամբողջություն է, որը նպատակ է հետապնդում կանխել օրինական տնտեսական և ֆինանսական համակարգերի շահագործումը, պաշտպանել դրա ամբողջականությունը և ապահովել ազգային ու համաշխարհային տնտեսության անվտանգությունը:

Հաշվի առնելով, որ ՓԼ/ԱՖ-ն անդրազգային հանցագործություններ են՝ դրանց դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է ներպետական և միջազգային իրավական ու ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավորում և կիրառում: Վերջիններիս արդյունավետությունը որոշող էական գործոն է դրանց ներդաշնակությունն ու երկրների միջև համագործակցության հնարավորությունը:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային համակարգը ներառում է՝

- ❖ **Միջազգային կազմակերպությունները**, որոնք իրենց հերթին բաժանվում են՝
 - ◆ մասնագիտացված կազմակերպությունների, որոնց միակ խնդիրը ՓԼ/ԱՖ դեմ պայքարն է,
 - ◆ միջազգային այլ կազմակերպությունների, որոնք, բացի իրենց հիմնական գործունեությունից, զբաղվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարով:
- ❖ **Միջազգային փաստաթղթերը:**

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական միջոցառումների աշխարհային խումբ (ՖԱԹՖ)

ՖԱԹՖ-ը միջկառավարական անկախ մարմին է: Այն հիմնադրվել է 1989թ.-ին Փարիզում և Մեծ յոթնյակի նախաձեռնությամբ ի սկզբանե նպատակ է հետապնդել համակարգել փողերի լվացման ուղղությամբ միջազգային գործունեությունը: ՖԱԹՖ-ը մշակում է համաշխարհային ֆինանսական համակարգը փողերի լվացումից, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումից պաշտպանելու քաղաքականություններ և սատարում է դրանց իրագործումը: ՖԱԹՖ Հանձնարարականները ճանաչվել են որպես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համաշխարհային չափորոշիչներ:

ՖԱԹՖ-ի հիմնական խնդիրներն են.

- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հանձնարարականների մշակումը և դրանց կատարելագործումը,
- ❖ ՓԼ/ԱՖ մեթոդների և տիպաբանությունների ուսումնասիրությունն ու համապատասխան հակազդման միջոցների մշակումը,
- ❖ ՖԱԹՖ Հանձնարարականների տարածմանը և արդյունավետ ներդրմանն աջակցությունը:

ՖԱԹՖ տիպի տարածաշրջանային մարմիններ

Եվրախորհրդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի փորձագետների հանձնախումբ (ՄԱՆԻՎԱԼ)

ՄԱՆԻՎԱԼ-ը ՖԱԹՖ տիպի տարածաշրջանային մարմին է, որի նպատակն է Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի զարգացումը և միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանության ապահովումը:

ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից անդամ երկրներում անցկացվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի իրավական, ֆինանսական և իրավապահ ասպեկտների գնահատումներ:

ՀՀ-ն անդամակցում է ՄԱՆԻՎԱԼ-ին 2001թ.-ից՝ Եվրոպայի խորհրդին անդամակցության օրվանից:

Եվրասիական խումբ

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի եվրասիական խումբը (ԵԱԽ) ՖԱԹՖ տիպի և դրա կողմից կողմից ճանաչված տարածաշրջանային մարմին է: ԵԱԽ-ն ստեղծվել է 2004թ.-ին եվրասիական տարածաշրջանի 6 երկրների կողմից: Ներկայումս խումբն ունի 9 անդամ երկիր, 17 պետություններ և 24 միջազգային կազմակերպություններ դրանում զբաղեցնում են դիտորդ անդամի կարգավիճակ: ԵԱԽ-ի հիմնական նպատակը եվրասիական տարածաշրջանի երկրներում ՓԼ/ԱՖ հակազդման գործուն իրավական և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծմանն աջակցելն է: Այն ունի ՖԱԹՖ-ին ասոցացված անդամի կարգավիճակ:

ԵԱԽ-ի խնդիրներն են՝

- ❖ Խմբի անդամ-երկրների՝ ՓԼ/ԱՖ հակազդմանն ուղղված ջանքերի միավորումը և համագործակցությունը տարածաշրջանային մակարդակով,
- ❖ Անդամ-երկրներում ՖԱԹՖ Հանձնարարականների ներդրմանն աջակցությունը,
- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարին ուղղված համատեղ միջոցառումների մշակումը և իրականացումը,

- ❖ Անդամ երկրներում ՖԱԹՖ Հանձնարարականներին համապատասխանության և ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ընդունված իրավական միջոցների արդյունավետության փոխադարձ գնահատումների իրականացումը,
- ❖ Մասնագիտացված միջազգային կազմակերպությունների, գործակալությունների և շահագրգիռ պետությունների հետ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության ծրագրերի համակարգումը,
- ❖ ՓԼ/ԱՖ ոլորտում տիպաբանությունների վերլուծությունը և նման հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ փորձի փոխանակումը՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները:

ԵԱԽ-ում ՀՀ-ն դիտորդ անդամի կարգավիճակ է ձեռք բերել 2006թ.-ին:

Էզմոնտ խումբ

Էզմոնտ խմբի նպատակը տարբեր պետությունների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համար ստեղծված ֆինանսական հետախուզության ազգային մարմինների (ՖՀՄ) համագործակցության միասնական հարթակի ձևավորումն է:

Էզմոնտ խմբի հիմնական դերն իր անդամ ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման միասնական սկզբունքների և անվտանգ ցանցի գործարկումն ու զարգացումն է:

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնն Էզմոնտ խմբին անդամակցում է 2007թ.-ից:

Միջազգային այլ կազմակերպություններ

Միջազգային այլ կազմակերպություններից են ՄԱԿ-ը, Եվրոպայի խորհուրդը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, Բազելյան կոմիտեն և Վոլֆսբերգյան խումբը: Այս կազմակերպությունները, բացի իրենց հիմնական գործունեությունից, զբաղվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարով՝ խորհրդատվական, պարտադիր կիրառման ենթակա փաստաթղթեր ընդունելու և դրանց ներդրումն ապահովելու միջոցով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում միջազգային արդյունավետ համագործակցության գրավականն է համապատասխան իրավական հիմքերի ձևավորումը: Դրանց թվում են՝

1. Միջազգային կոնվենցիաները,
2. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը,
3. ՖԱԹՖ Հանձնարարականները,
4. Միջազգային այլ կառույցների առաջարկությունները:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է հետևյալ միջազգային փաստաթղթերը.

«Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի 1988թ.-ի կոնվենցիան, որը հայտնի է «Վիեննայի կոնվենցիա» անվանումով: Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը կանխելու նպատակով Վիեննայի կոնվենցիան նախատեսում է միջազգային իրավական համալիր միջոցառումների անցկացում և որպես դրանց բաղկացուցիչ մաս միջազգային մակարդակում առաջին անգամ ճանաչել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը: Վիեննայի կոնվենցիան մասնակից պետություններին պարտավորեցնում է իրենց օրենսդրությամբ քրեականացնել թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի հետ կապված հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտների օրինականացումը: Հայաստանի Հանրապետությունը Վիեննայի կոնվենցիային միացել է 1993թ.-ին:

«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Եվրոպայի խորհրդի 1990թ.-ի կոնվենցիան, որը հայտնի է «Ստրասբուրգի կոնվենցիա» անվանումով: Այս փաստաթղթի միջոցով միջազգային իրավական համակարգում առաջին անգամ ամբողջական և համակարգված կարգավորում է ստացել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը: Ստրասբուրգի կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ներպետական մակարդակում քրեաիրավական միջոցներ ձեռնարկել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի և այդ եկամուտների բռնագրավման, ինչպես նաև քրեական գործերի քննության ընթացքում միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունը Ստրասբուրգի կոնվենցիային միացել է 2003թ.-ին:

ՖԱԹՖ Հանձնարարականները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային չափանիշներն են: ՖԱԹՖ Հանձնարարականներով նախատեսվում են հետևյալ առանցքային միջոցառումները՝

- ❖ ռիսկերի բացահայտում, քաղաքականությունների մշակում և ներպետական մակարդակով համակարգում,
- ❖ փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում,
- ❖ ֆինանսական հատվածում և այլ նախատեսված հատվածներում կանխարգելիչ միջոցառումների իրականացում,
- ❖ իրավասու մարմինների (մասնավորապես՝ քննչական, իրավապահ և վերահսկող մարմիններ) լիազորությունների և պարտականությունների, ինչպես նաև այլ ինստիտուցիոնալ միջոցառումների շրջանակի սահմանում,
- ❖ իրավաբանական անձանց և կազմավորումների իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության և հասանելիության բարելավում և
- ❖ միջազգային համագործակցության դյուրացում:

ՖԱԹՖ Հանձնարարականները պետությունների համար **դե յուրե** պարտադիր բնույթ չեն կրում, սակայն պետությունների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի գնահատումը կատարվում է դրանցով: Գնահատման արդյունքում բացահայտվում է անդամ-երկրներում Հանձնարարականների հիման վրա համապատասխան օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունման և ներդրման արդյունավետությունը, դրանց համապատասխանությունը ՖԱԹՖ Հանձնարարականներին:

«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի 2000թ.-ի կոնվենցիան, որը հայտնի է նաև «Պալերմոյի կոնվենցիա» անվանումով: Կոնվենցիան մասնակից պետություններին պարտավորեցնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը դիտարկել որպես հանցագործություն, միաժամանակ որպես նախորդող հանցակազմ առաջարկում է դիտարկել բոլոր ծանր հանցագործությունները: Պալերմոյի կոնվենցիան անդրադառնում է նաև դատական համագործակցության, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավման, վկաների և տուժողների պաշտպանության հարցերին: Հայաստանի Հանրապետությունը Պալերմոյի կոնվենցիային միացել է 2003թ.-ին:

«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի 2005թ.-ի կոնվենցիան, որը հայտնի է «Վարշավայի կոնվենցիա» անվանումով: Վարշավայի կոնվենցիան, ըստ էության, Ստրասբուրգի կոնվենցիայի կատարելագործված խմբագրությունն է:

Այն ավելի ընդլայնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի քրեաիրավական կանխարգելիչ միջոցները:

Վարչավայի կոնվենցիան կարգավորում է ահաբեկչության ֆինանսավորման, ներպետական մակարդակում ձեռնարկվող միջոցառումների, միջազգային համագործակցության, մոնիթորինգի մեխանիզմների, վեճերի լուծման հետ կապված հարցերը: Վարչավայի կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է 2008թ.-ին:

ԻՆՉՊԻՍԻՆ Է ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ



այաստանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գործունեությունը մեկնարկել է փողերի լվացման (2003թ.) և ահաբեկչության ֆինանսավորման (2004թ.) քրեականացմամբ:

Փողերի լվացման հանցակազմը ՀՀ քրեական օրենսգրքով

Փողերի լվացումը ՀՀ-ում քրեականացվել է 2003թ.-ին: Այն դասվում է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների շարքին և սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով:

Փողերի լվացման հանցակազմը դրսևորվում է դիտավորությամբ կատարված հետևյալ գործողություններով.

1. հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ
2. գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ
3. գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

Փողերի լվացման հանցանքի կատարման համար պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը և իրավաբանական անձը:

Հարկ է նշել, որ փողերի լվացման համար պատասխանատվության կարող է ենթարկվել ինչպես անձը, որը կատարել է նախորդող հանցանքը և այնուհետև օրինականացրել է իր իսկ կատարած հանցանքի արդյունքում ձևավորված հանցավոր գույքը, այնպես էլ՝ անձը, որը չի կատարել նախորդող հանցանք, սակայն օրինականացրել է այլ անձի կատարած հանցանքի արդյունքում ձևավորված հանցավոր գույքը:

Արարքը փողերի լվացում որակելու հիմքում ընկած է երկու նախապայման՝

1. հանցակազմի մաս կազմող գործողությունները կատարվում են՝ գիտակցելով գույքի հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու հանգամանքը,
2. կատարվող գործողությունները հետապնդում են գույքի հանցավոր ծագումը թաքցնելու, խեղաթյուրելու, քողարկելու կամ հանցանքը կատարած անձին պատասխանատվությունից խուսափելու հարցում օժանդակելու նպատակ:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված արարքները հետևյալն են՝

- ❖ փոխարկումը (կոնվերտացումը),
- ❖ փոխանցումը,
- ❖ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը,
- ❖ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը խեղաթյուրելը,
- ❖ ձեռք բերելը,
- ❖ տիրապետելը,
- ❖ պահելը,
- ❖ օգտագործելը,
- ❖ տնօրինելը:

Այսպիսով, փողերի լվացման հանցանքը կատարվում է դիտավորությամբ, և հանցակազմի պարտադիր մաս են կազմում անձի կողմից որոշ հանգամանքների իմացությունը և որոշակի նպատակ հետապնդելը:

Ինչ վերաբերում է հանցագործության առարկային, ապա այն սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով և ներառում է ցանկացած տեսակի նյութական բարիքներ, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտներ, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցներ, վճարային գործիքներ, արժեթղթեր և գույքային իրավունքներ, գույքային իրավունքներ կամ շահեր հավաստող փաստաթղթեր կամ այլ միջոցներ, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսներ, շահութաբաժիններ կամ այլ եկամուտներ, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքներ:

Փողերի լվացման հանցագործության ծանրացնող հանգամանքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով: 2-րդ մասի համաձայն՝ արարքի ծանրացնող հանգամանքներն են դրա կատարումը՝

1. մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
2. խոշոր չափերով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ խոշոր չափ է համարվում 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը (արժեքը):

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով տրված են առավել ծանրացնող հանգամանքները: Դրանք են փողերի լվացման կատարումը՝

1. հանցավոր կազմակերպության կողմից,
2. իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
3. առանձնապես խոշոր չափերով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առանձնապես խոշոր չափ է համարվում 10 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը (արժեքը):

Կախված ծանրացնող հանգամանքներից՝ պատասխանատվության միջոցները ևս ավելի խիստ են: Այսպես, եթե 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար նախատեսված է միայն ազատազրկում երկուսից հինգ տարի ժամկետով, ապա նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված արարքների համար նախատեսված է համապատասխանաբար հինգից տասը տարի ժամկետով և վեցից տասներկու տարի ժամկետով ազատազրկում:

Ահաբեկչության ֆինանսավորման հանցակազմը

Ահաբեկչության ֆինանսավորումը ՀՀ-ում քրեականացվել է 2004թ.-ից:

Ահաբեկչության ֆինանսավորման հանցակազմն ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով: Այն դասվում է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների շարքին:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածի՝ ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելը գույքի ուղղակի կամ անուղղակի տրամադրումը կամ հավաքագրումն է՝ գիտակցելով, որ այն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործվելու է կամ կարող է օգտագործվել անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից կամ օրենսգրքով նախատեսված հետևյալ հանցանքները՝

1. ահաբեկչությունը (308-րդ հոդված),
2. ահաբեկչական գործունեությանը նպաստելը (309-րդ հոդված),
3. ահաբեկչական կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը (311-րդ հոդված),
4. պատանդ վերցնելը կամ պահելը (315-րդ հոդված),
5. օդանավեր, նավեր կամ երկաթուղային շարժակազմեր զավթելը, պահելը կամ փախցնելը (316-րդ հոդված),
6. ծովահենությունը կամ օդահենությունը (317-րդ հոդված)

կատարելու համար կամ ֆինանսական ծառայության մատուցումն է՝ գիտակցելով, որ այդ ծառայությունը կամ դրա արդյունքն օգտագործվելու է անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից կամ ուղղված է կամ կարող է ուղղվել հիշյալ հանցանքներ կատարելուն:

ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված արարքները հետևյալն են՝

1. գույքի ուղղակի կամ անուղղակի ցանկացած եղանակով տրամադրումը,
2. գույքի ուղղակի կամ անուղղակի ցանկացած եղանակով հավաքագրումը,
3. ֆինանսական ծառայությունների մատուցումը:

Ահաբեկչության ֆինանսավորման հանցանքի կատարման համար քրեական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը, ինչպես նաև իրավաբանական անձը:

Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության ծանրացնող հանգամանքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածի 2-րդ մասով: Դրանք են՝

- ❖ արարքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը,
- ❖ արարքն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը:

Կախված ծանրացնող հանգամանքներից՝ պատասխանատվության միջոցները ևս ավելի խիստ են նախատեսված: Այսպես, 310-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար նախատեսված է ազատազրկում՝ հինգից տասը տարի ժամկետով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի համար՝ ազատազրկում՝ ութից տասներկու տարի ժամկետով:

Ահաբեկչության ֆինանսավորման՝ որպես հանցագործության համար սահմանված է միևնույն առարկան, ինչ փողերի լվացման դեպքում:

ՓԼ/ԱՖ քրեականացումից հետո մյուս կարևոր քայլը համապատասխան օրենսդրության ներդրումն էր:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական շրջանակները

Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարը կարգավորվում է՝

- ❖ Միջազգային կոնվենցիաներով և պայմանագրերով,
- ❖ ՀՀ Սահմանադրությամբ,
- ❖ ՀՀ քրեական օրենսգրքով,
- ❖ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով,
- ❖ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով,
- ❖ ՀՀ մաքսային օրենսգրքով,
- ❖ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով,

- ❖ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով և դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերով,
- ❖ ՀՀ ԿԲ ուղեցույցներով, տիպաբանություններով:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին առաջին օրենքը՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենք անվանումով, ՀՀ-ում ընդունվել է 2004թ.-ի դեկտեմբերի 14-ին և ուժի մեջ մտել 2005թ.-ի մարտի 22-ին:

Համակարգի զարգացումներով պայմանավորված՝ 2008թ.-ի մայիսի 26-ին ընդունվել և նույն թվականի օգոստոսի 31-ին ուժի մեջ է մտել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ երկրորդ օրենքը (Օրենք), որը, ենթարկվելով փոփոխությունների և լրացումների՝ գործում է մինչ օրս:

Օրենքը կարգավորում է ՓԼ/ԱՖ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, սահմանում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում լիազոր մարմնի՝ Կենտրոնական բանկի, ինչպես նաև դրա պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման՝ ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային մարմնի՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի գործառույթներն ու լիազորությունները, լիազոր մարմնի և վերահսկող մարմինների, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ու վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները, միջազգային համագործակցությունը, օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում պատասխանատվության միջոցները և այլն:

Օրենքն էականորեն լրամշակվել է 2014, 2018 և 2021 թվականներին: Մասնավորապես՝

2014թ.-ին՝

- ❖ ընդլայնվել է Օրենքով սահմանվող հասկացությունների շրջանակը,
- ❖ փոփոխվել է պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման սահմանաչափը՝ կանխիկի հետ կապված գործարքների համար որպես սահմանաչափ նախատեսվել 5 միլիոն ՀՀ դրամը,
- ❖ հստակեցվել են գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կատարված վերլուծությունները փաստաթղթավորելու և պահպանելու հարցը, լիազոր մարմնի իրավասությունը՝ հաշվետվություն տրամադրող անձանց վերահսկողության իրականացման հետ կապված,
- ❖ հստակեցվել են հաճախորդի պատշաճ ուսումնասիրության, դրան հարակից պարտավորությունների և տեղեկատվության պահպանման ընթացակարգերը,
- ❖ ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցների կամ այլ գույքի սառեցման կառուցակարգերը համապատասխանեցվել են միջազգային պահանջներին և այլն:

2018թ.-ին՝

- ❖ սահմանվել է «զանգվածային ոչնչացման զենքի (ՀՈԶ) տարածման ֆինանսավորում» հասկացությունը, ՀՈԶ տարածման հետ կապված անձանց պատկանող գույքի սառեցման պարտականությունը,
- ❖ անշարժ գույքի առուվաճառքի գործարքների մասով նախատեսվել է 50 միլիոն դրամը գերազանցող գործարքների դեպքում գերազանցող գումարի մասով կանխիկ եղանակով վճարում իրականացնելն արգելող դրույթ,
- ❖ սահմանվել են ՓԼ/ԱՖ վերաբերյալ առաջացած կասկածները չբացահայտելու անհրաժեշտությամբ պայմանավորված հաշվետվություն տրամադրող անձանց հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու պարտականությունից ազատելու վերաբերյալ դրույթներ:

2021թ.-ին՝

- ❖ ընդլայնվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը՝ ներառելով տեղական բարձրաստիճան պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպություններում նշանակալից գործառույթներ իրականացնող անձանց, այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամներին կամ նրանց հետ սերտորեն փոխկապակցված անձանց,
- ❖ սահմանվել է իրավաբանական անձի իրական շահառուի նույնականացման և ինքնության ստուգմանն ուղղված ողջամիտ քայլերի ձեռնարկման պահանջ,
- ❖ նախատեսվել են ֆինանսական խմբի անդամների միջև կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման դրույթներ,
- ❖ Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությունների շարքից հանվել և ՖԴԿ-ին է վերապահվել կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու իրավասությունը:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակները

ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակներում ներառված են՝

- ❖ Լիազոր մարմինը,
- ❖ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը,
- ❖ Հաշվետվություն տրամադրող անձինք,
- ❖ Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները,
- ❖ Վարույթի հանրային մասնակիցները,
- ❖ Վերահսկողություն իրականացնող մարմինները:

Լիազոր մարմին

ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է, որն այս ոլորտում իր լիազորություններն ու գործառույթներն իրականացնում է Օրենքի համաձայն: Վերջիններիս թվում են՝

- ❖ տեղեկատվության հավաքագրումը,
- ❖ տեղեկատվության վերլուծությունը,
- ❖ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցներին ծանուցման տրամադրումը,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավական ակտերի (այդ թվում՝ ուղեցույցների, չափանիշների, տիպաբանությունների) ընդունումը,
- ❖ հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ վերահսկողությունը (վերահսկողությանն օժանդակում), այդ թվում՝ հանձնարարականների տրամադրումը, պատասխանատվության կիրառումը, հետադարձ կապի ապահովումը,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կողմից ներքին աուդիտի իրականացման դեպքերի ու հաճախականության սահմանումը,
- ❖ կասկածելի գործարքների կասեցումը, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման հետ կապված անձանց գույքի սառեցումը,
- ❖ ահաբեկչության հետ կապված անձանց, ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում չհամապատասխանող երկրների (տարածքների) ցանկերի հրապարակումը,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում հանրային իրազեկման իրականացումը,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ուսուցումը, ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցների որակավորումը,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում միջազգային կառույցների և ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ համագործակցությունը:

Ֆինանսական դիտարկումների կենտրոն

Օրենքի նպատակներից ելնելով՝ լիազոր մարմնում գործում է պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ), որը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հաստատած կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացնում է լիազոր մարմնի համար սահմանված իրավասությունները՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին և ՀՀ կենտրոնական բանկի նախագահին վերապահված իրավասությունների:

ՖԴԿ-ն ստեղծվել է 2005թ.-ին՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին առաջին օրենքի ընդունումից հետո, և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսական հետախուզության մարմինը (ՖՀՄ): Համաձայն միջազգային կոնվենցիաների և այլ փաստաթղթերի՝ ՖՀՄ-ների ստեղծման նպատակն է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ապահովել տեղեկատվության արդյունավետ հավաքագրման, վերլուծության և հետագա փոխանակման գործընթացներն ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական մակարդակով:

ՖՀՄ-ները դասակարգվում են 4 հիմնական խմբի.

- ❖ **Վարչական.** ՖՀՄ-ն որևէ վարչական կամ ոչ իրավապահ կամ ոչ դատական կամ դատախազական կազմավորման ստորաբաժանում է կամ գործում է այդպիսի ստորաբաժանման վերահսկողության ներքո: Հիմնականում վարչական տիպի ՖՀՄ-ները գործում են ֆինանսների նախարարության կամ կենտրոնական բանկի կազմում (օրինակ՝ Ֆրանսիա, Իսպանիա, ՌԴ, ԱՄՆ, Ուկրաինա, Չեխիա, Նիդեռլանդներ և այլն):
- ❖ **Իրավապահ.** ՖՀՄ-ն ստեղծվում է իրավապահ մարմնի կառուցվածքում (օրինակ՝ Ավստրիա, Էստոնիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա և այլն) և օժտված է այդ մարմնին բնորոշ իրավասություններով:
- ❖ **Դատական կամ դատախազական.** ՖՀՄ-ն ստեղծվում է երկրներում, որտեղ դատախազները դատական համակարգի մաս են կազմում և ուղղորդում ու վերահսկողություն են իրականացնում նախաքննության նկատմամբ (օրինակ՝ Կիպրոս, Լյուքսեմբուրգ և այլն):
- ❖ **Հիբրիդային.** Նման ՖՀՄ ստեղծելու նպատակը վերը նշված տեսակների առավելությունները մեկտեղելն է: Օրինակ՝ որոշ ՖՀՄ-ներ ունեն վարչական և իրավապահ տիպի ՖՀՄ-ների առանձնահատկություններ, որոշ երկրներում դա կարող է լինել ՓԼ/ԱՖ դեմ պայքարով զբաղվող երկու տարբեր մարմինները միացնելու արդյունք և այլն (օրինակ՝ Դանիա, Նորվեգիա և այլն):


ՀՀ-ում ՖԴԿ-ն վարչական տիպի ՖՀՄ է, քանի որ գործում է ՀՀ կենտրոնական բանկի կազմում: ՖԴԿ-ն կենտրոնական դեր է խաղում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում, և դրա նպատակն է ապահովել այդ համակարգի միասնականությունը, միջազգային չափորոշիչներին համապատասխանությունը և նպաստել ու հետևել դրա աշխատանքներին:

ՖԴԿ-ն կապող օղակ է իրավապահ մարմինների և հաշվետվություն տրամադրող անձանց միջև: Մասնավորապես, հաշվետվություն տրամադրող անձանցից ստանալով տարբեր ազդականեր, օրինակ՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություններ, ՖԴԿ-ն վերլուծում է դրանք:

Եթե վերլուծության արդյունքում հանգում է եզրակացության, որ առկա են ՓԼ/ԱՖ հետ կապված հիմնավոր կասկածներ, ՖԴԿ-ն ծանուցում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, վարույթի հանրային մասնակիցներին:

ՖԴԿ-ն և նշված մարմինները կարող են միմյանցից խնդրարկել տեղեկատվություն: Ինչ վերաբերում է վերահսկող մարմիններին, ՖԴԿ-ն վերջինների հետ համագործակցում է ոչ ֆինանսական հաստատություն հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ վերահսկողության շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՖԴԿ-ի, մասնակցում է ՓԼ/ԱՖ ոլորտում միջազգային չափորոշիչների մշակման, երկրների կողմից դրանց ներդրման ու իրականացման գործում ներգրավված կազմակերպությունների ու կառույցների աշխատանքներին:



Հաշվետվություն տրամադրող անձինք

Համաձայն Օրենքի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց թվին դասվում են՝

- ❖ ֆինանսական կազմակերպությունները,
- ❖ ոչ ֆինանսական կազմակերպությունները (ներառյալ՝ որոշ դեպքերում անհատ ձեռնարկատերերը),
- ❖ պետական մարմինները:

Հաշվետվություն տրամադրող ֆինանսական կազմակերպություններն են՝

- ❖ բանկերը,
- ❖ վարկային կազմակերպությունները,
- ❖ արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք,

- ❖ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձինք,
- ❖ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք,
- ❖ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիան,
- ❖ ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունները և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք,
- ❖ ներդրումային ֆոնդի կառավարիչները և ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձինք, այդ թվում՝ ներդրումային ֆոնդերի կառավարման հետ կապված հարաբերությունների մասով,
- ❖ գրավատները:

Հաշվետվություն տրամադրող ոչ ֆինանսական կազմակերպություններն են՝

- ❖ ոչելքորական գործունեություն իրականացնող անձինք,
- ❖ նոտարները,
- ❖ փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք,
- ❖ անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք,
- ❖ աուդիտորական կազմակերպությունները և աուդիտորները,
- ❖ թանկարժեք մետաղների դիլերները,
- ❖ թանկարժեք քարերի դիլերները,
- ❖ արվեստի գործերի դիլերները,
- ❖ սակարկությունների կազմակերպիչները,
- ❖ խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպիչները,
- ❖ հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք:

Հաշվետվություն տրամադրող այլ անձինք են՝

- ❖ վարկային բյուրոն՝ միայն հաշվառման և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման պարտականությունների և դրանց խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության մասով,
- ❖ անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազոր մարմինը՝ միայն հաշվառման, պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման պարտականությունների և դրանց խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության մասով,
- ❖ իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինը՝ պետական ռեգիստրը, միայն հաշվառման և պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման պարտականությունների և դրանց խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության մասով:

ՀՀ-ում ՓԼ/ԱՖ և ՁՈՁ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը (Հանձնաժողով)

Հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ վարչապետի 2019թ.-ի հունվարի 17-ի թիվ 45-Ա որոշմամբ: Այն խորհրդակցական մարմին է, որի խնդիրներն են՝

- ❖ ՀՀ-ում ՓԼ/ԱՖ և ՁՈՁ տարածման ֆինանսավորման ռիսկերի բացահայտմանն ու գնահատմանն ուղղված գործողությունների համակարգումը, դրանց արդիականության ապահովումը,
- ❖ ՀՀ-ում ՓԼ/ԱՖ և ՁՈՁ տարածման ֆինանսավորման ռիսկերի գնահատման արդյունքներն արտացոլող միասնական պետական քաղաքականության մշակումը,
- ❖ ՀՀ-ում ՓԼ/ԱՖ և ՁՈՁ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ներպետական և միջազգային համագործակցության համակարգումը,
- ❖ ՀՀ-ում ՓԼ/ԱՖ և ՁՈՁ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի կատարելագործմանն ուղղված այլ խնդիրների իրագործումը:

Հանձնաժողովը 2021թ.-ի դեկտեմբերին ընդունել է ՓԼ/ԱՖ և ՁՈՁ տարածման ոլորտում 2022-2024թթ.-ի ազգային ռազմավարությունը և դրա գործողությունների ծրագիրը:

Հանձնաժողովի նախագահը ՀՀ կենտրոնական բանկի նախագահն է, իսկ քարտուղարը՝ ՖԴԿ-ի ղեկավարը: Հանձնաժողովի անդամների կազմում պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ են: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններից Հանձնաժողովում ներկայացված է Հայաստանի բանկերի միությունը:

ԻՆՉ Է ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ



Լ/ԱՖ դեմ պայքարը ոչ միայն բարոյական հրամայական է, այլև իրավական պահանջ, որը բավարարելու համար հաշվետվություն տրամադրող անձը պետք է ձևավորի ՓԼ/ԱՖ կանխարգելման իր համակարգը:

Վերջինս կանոնների, ընթացակարգերի և կառուցակարգերի ամբողջություն է, որը կոչված է աջակցել կազմակերպությանը՝ բացահայտելու և կանխելու հանցավոր տնտեսական գործունեությունը:

Հաշվետվություն տրամադրող անձի կողմից իր անհատական համակարգի ձևավորումը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ամենամեծ մարտահրավերն է, քանի որ համակարգը, բացի իրավական համապատասխանության ապահովումից, պետք է արտացոլի հաշվետվություն տրամադրող անձի գործունեության ոլորտի, գործարար մոդելի, գործարար հարաբերությունների և հաճախորդների առանձնահատկությունները, ինչպես նաև ժամանակի հնարավոր սպառնալիքները, որոնց օրենսդրությունը դեռևս չի անդրադարձել, սակայն որոնք իրական խնդիրներ կարող են ձևավորել հանցավոր գործունեությունը բացահայտելու և կանխելու համար:

Այս տեսանկյունից համակարգը պետք է լինի ճկուն ու կանոնակարգված և գործի մշտական հիմունքներով: Ընդհանուր առմամբ, ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգը ռիսկերի բացահայտման, գնահատման ու կառավարման, հաճախորդների նույնականացման և ուսումնասիրության, գործարքների վերլուծության, տվյալների հավաքագրման ու պահպանման, վերահսկման և հաշվետվողականության ընթացակարգերի մանրակրկիտ ճանապարհային քարտեզ է, որն անհրաժեշտ է՝

- ❖ ՓԼ/ԱՖ իրավական համապատասխանությունն ապահովելու, ՓԼ/ԱՖ ներպետական և միջազգային զարգացումներին համահունչ արձագանքելու,
- ❖ Ֆինանսական կորուստներից և իրավական հետևանքներից խուսափելու միջոցով կազմակերպության ֆինանսական կայունությունն ու գործարար հեղինակությունն ամրապնդելու,
- ❖ շրջահայաց գործարար հարաբերություններ հաստատելու միջոցով հաճախորդների ֆինանսական կորուստների ռիսկը նվազեցնելու և նրանց գոհունակությունն ամրապնդելու,
- ❖ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում և տնտեսական կայունության ապահովման հարցում սեփական ներդրումն ունենալու համար:

ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգի հենասյուններն են՝

- ❖ ՓԼ/ԱՖ համապատասխանության կորպորատիվ մշակույթը,
- ❖ ներքին հսկողության և ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգը, այդ թվում՝
 - ◆ ՓԼ/ԱՖ համապատասխանության պատասխանատուի կամ ներքին դիտարկումների մարմնի կամ գործառույթի առկայությունը,
 - ◆ ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատումն ու կառավարումը,
 - ◆ հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը,
 - ◆ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության որոշումը,
 - ◆ համակարգը ներքին կամ արտաքին աուդիտի ենթարկելը,
- ❖ լիազոր մարմնին հաշվետվությունների ներկայացումը:

ԻՆՉՊԵՐՍ ԶԵՎԱՎՈՐԵԼ ՓԼ/ԱՖ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ Ո՞Վ Է ԴՐԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ



համապատասխանության մշակույթն էական նշանակություն ունի ՓԼ/ԱՖ կանխարգելման համար: Այն դուրս է գալիս օրենսդրական պահանջների շրջանակից:

Համապատասխանության մշակույթը կազմակերպության կորպորատիվ մշակույթի բաղադրիչն է, որը դրդում է կազմակերպության տարբեր մակարդակներում գործող անձանց հետևել իրենց իրավասություններին և վարքագծին վերաբերող սահմանափակումներին նույնիսկ այն դեպքում, երբ ոչ ոք չի վերահսկում իրենց գործունեությունը:

Եթե հաշվետվություն տրամադրող անձի կառավարման համակարգում ձևավորվել է խորհուրդ, համապատասխանության մշակույթի զարգացման հարցում վերջինիս վերապահվում է առանցքային դերակատարում: ՓԼ/ԱՖ նկատմամբ անհանդուրժողականության հանձնառությունը ստանձնում է խորհուրդը՝ պարտավորվելով այն դարձնել կազմակերպության կորպորատիվ մշակույթի բնութագրիչ:

Խորհրդի բացակայության դեպքում այդ դերը ստանձնում է գործադիր մարմինը:

Որպես համապատասխանության կորպորատիվ մշակույթի երաշխավոր՝ խորհուրդը պարտավոր է իրականացնել մի շարք առանցքային գործառնություններ:

1. ՓԼ/ԱՖ ներքին իրավական ակտերի սահմանում

ՓԼ/ԱՖ ներքին իրավական ակտերի (քաղաքականություն, հայեցակարգ, կարգ, կանոն, կանոնակարգ, ընթացակարգ, հրահանգ կամ այլ) սահմանման միջոցով խորհուրդը բարձրագույն ղեկավարությանը և աշխատակիցներին տրամադրում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ուղենիշներ, ջատագովում է համապատասխանության մշակույթը:

ՓԼ/ԱՖ քաղաքականությունը սահմանում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում կազմակերպության համակարգերի և վերահսկողության միջոցների ընդհանուր շրջանակը: Այն կարող է սահմանել ՓԼ/ԱՖ ռիսկի ախորժակը, հանդուրժողականությունը, հաճախորդների պատշաճ ուսումնասիրության սկզբունքները, ՓԼ/ԱՖ կանխարգելման պատասխանատվության բաշխման կորպորատիվ մոտեցումները և այլ հարցեր:

ՓԼ/ԱՖ ներքին իրավական ակտերը պետք է ողջամտորեն նախագծված լինեն օրենսդրական կարգավորումներին համապատասխան, արտահայտեն կազմակերպությանը ներհատուկ ՓԼ/ԱՖ ռիսկերն ու միտված լինեն դրանց նվազեցմանը:

Կազմակերպության բոլոր մակարդակներում կիրառելի լինելու համար դրանք պետք է ձևակերպված լինեն պարզ, հստակ և մատչելի: ՓԼ/ԱՖ ներքին իրավական ակտերը պետք է ունենան գործնական ուղղվածություն, ազդակներ հաղորդեն կազմակերպության բարձրագույն ղեկավարությանը և աշխատակիցներին կորպորատիվ գործընթացների, ընթացակարգերի, թույլատրելի կամ արգելվող վարքագծի մասին:

ՓԼ/ԱՖ զարգացող ռիսկերի և կարգավորման փոփոխվող պահանջներին համապատասխան խորհուրդը պետք է ապահովի նաև ներքին իրավական ակտերի պարբերական վերանայումները, որոնք կարող են կատարվել ընթացիկ դիտարկումների, ներքին և արտաքին աուդիտի բացահայտումների հիման վրա:

Ներքին իրավական ակտերի վերանայման միջոցով խորհուրդը ցույց է տալիս, որ ՓԼ/ԱՖ կանխարգելմանն ուղղված ջանքերը ոչ թե միանգամյա ակցիա են, այլ շարունակական գործընթաց:

ՓԼ/ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտերի պահանջը նախատեսված է օրենսդրությամբ:

Հաշվետվություն տրամադրող անձը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է ունենալ ներքին իրավական ակտեր, լիազոր մարմնում հաշվառվելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատում և ՖԴԿ է ներկայացնում ՓԼ/ԱՖ ներքին իրավական ակտերը: ՓԼ/ԱՖ ներքին իրավական ակտերը նոր խմբագրությամբ հաստատելուց, ինչպես նաև դրանցում լրացումներ կամ փոփոխություններ կատարելուց հետո ՖԴԿ են ներկայացվում մեկշաբաթյա ժամկետում:

Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել լիազոր մարմնի պահանջով: Այս դեպքում հաշվետվություն տրամադրող անձը պարտավոր է մեկամսյա ժամկետում կատարել համապատասխան փոփոխությունները կամ լրացումները և մեկշաբաթյա ժամկետում դրանք տրամադրել լիազոր մարմնին:

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է ներքին իրավական ակտերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները:

2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ինտեգրումը ռազմավարությանը

ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատումները և մեղմման միջոցառումները կազմակերպության ընդհանուր ռազմավարությանն ինտեգրելով՝ խորհուրդը երաշխավորում է, որ ՓԼ/ԱՖ համապատասխանությունը ներառված է կորպորատիվ որոշումների կայացման գործընթացում: Նման կերպ կազմակերպությունը հնարավորություն է ստանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարը համապատասխանեցնել կազմակերպության ավելի ընդգրկուն և երկարաժամկետ նպատակներին ու խնդիրներին, պլանավորել ՓԼ/ԱՖ համապատասխանության համար անհրաժեշտ ռեսուրսները, սահմանել առաջնահերթությունները:

Ինտեգրումը հեշտացնում է նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարում կորպորատիվ ամբողջական դիրքորոշման ձևավորումը՝ նպաստելով, որ կազմակերպության գործարար բոլոր միավորներն ու գործառույթներն աշխատեն ներդաշնակ ու համաձայնեցված:

3. ՓԼ/ԱՖ ուսուցումների պրակտիկայի խրախուսումը

Համապատասխանությունը խթանող մշակույթի ձևավորման համար խորհուրդը պետք է խրախուսի ՓԼ/ԱՖ ուսուցումների պրակտիկան, որը պետք է սկսվի խորհրդի անդամներից՝ հնարավորություն տալով վերջիններիս հասկանալ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրենց վերապահված դերն ու պարտականությունները: Պարտադիր չէ, որ խորհրդի անդամները ՓԼ/ԱՖ վերաբերյալ ունենան խորը փորձաքննություն, սակայն նրանք պետք է իրազեկված լինեն ՓԼ/ԱՖ օրենսդրության, ռիսկերի կառավարման և վերահսկման միջոցների, կորպորատիվ քաղաքականություններն ու ընթացակարգերը սահմանելու, դրանց արդիականությունը պահպանելու, անհամապատասխանություններին ու խնդիրներին ժամանակին արձագանքելու իրենց պարտականությունների վերաբերյալ: Միաժամանակ, խորհուրդը պետք է ապահովի, որ կազմակերպության բարձրագույն ղեկավարությունը և ՓԼ/ԱՖ պատասխանատուներն ունենան անհրաժեշտ գիտելիքներն ու կարողություններն իրենց պատվիրակված գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ հաշվետվություն տրամադրող անձը պետք է ՓԼ/ԱՖ կանխարգելման թեմայով պարբերաբար ուսուցումներ կազմակերպի խորհրդի, գործադիր մարմնի, ներքին դիտարկումների մարմնի, հաճախորդների սպասարկման և ներքին աուդիտի գործառույթներն իրականացնող, ինչպես նաև ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների համար: Նոր աշխատակիցների համար ուսուցումը պետք է կազմակերպվի աշխատանքի ընդունումից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Հաշվետվություն տրամադրող անձի իրականացրած ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը պետք է հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 տարի ժամկետով:

4. Համագործակցությունը բարձրագույն ղեկավարության հետ

ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում բարձրագույն ղեկավարությունն օժտված է էական իրավասություններով:

Բարձրագույն ղեկավարության իրավասության ներքո են առնվազն՝

- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման քաղաքականության ներդրումը և դրա արդյունավետ իրականացումը,
- ❖ ՓԼ/ԱՖ ներքին իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը և դրանց նկատմամբ հսկողությունը,
- ❖ խորհրդի համաձայնությամբ ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի նշանակումը և ազատումը,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում աշխատակիցների պատշաճ ուսուցումը,
- ❖ ներքին դիտարկումների մարմնի գործունեությունն անհրաժեշտ ռեսուրսներով ապահովումը,
- ❖ ներքին դիտարկումների, ներքին աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը և այլն:

Հետևաբար, խորհրդի և բարձրագույն ղեկավարության համագործակցությունը կխթանի ՓԼ/ԱՖ կանխարգելման հստակ շրջանակների ձևավորումը, կբարձրացնի խորհրդի տեղեկացվածությունը ՓԼ/ԱՖ միջոցառումների, այդ թվում՝ թերությունների ու անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված քայլերի արդյունքների, ռիսկերի և կարգավորման դաշտի փոփոխությունների մասին: Խորհրդի և ղեկավարության միջև համագործակցությունը հնարավորություն է տալիս ընկալել միմյանց պարտականությունների շրջանակը, ձևավորել պատասխանատվության ընդհանուր ու փոխադարձ զգացում և նպաստել ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգված մոտեցման ձևավորմանը:

5. ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում սեփական արդյունավետության գնահատումը

Ինչպես ցանկացած գործունեություն, խորհրդի գործունեությունը ենթակա է գնահատման: Իր գործունեությունը գնահատելիս խորհուրդը պետք է հետամնու լինի, որ գնահատվի նաև ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իր պարտականությունների իրականացումը՝ ինչպես անհատական, այնպես էլ հավաքական մակարդակում: Նման գնահատումներն օգնում են բացահայտել բարելավման ենթակա ոլորտները, խորհրդի գիտելիքների և կարողությունների բացը, ամրապնդել ՓԼ/ԱՖ կանխարգելման պրակտիկան:

6. Ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի ձևավորումը


Ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նպատակն է ապահովել կազմակերպության ռեսուրսների արդյունավետ կառավարումը, հաշվետվությունների ճշգրտությունն ու ամբողջականությունը, իրավական համապատասխանությունը, խարդախությունների և սխալների կանխումը, կազմակերպության ներկա վիճակի և հեռանկարների վերաբերյալ օբյեկտիվ և հստակ պատկերացման տրամադրումը, կազմակերպության կողմից ընդունված ռիսկերի ողջամտության ապահովումը: Ներքին հսկողության գործուն համակարգն ավելացնում է ՓԼ/ԱՖ ռիսկերը բացահայտելու և կառավարելու կազմակերպության կարողությունները:

Ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգը ձևավորելիս խորհուրդը պետք է հետամնու լինի, որ դրա համարժեքության և արդյունավետության համար պատասխանատվությունը գիտակցվի կազմակերպության կառավարման բոլոր մակարդակներում, քանի որ դա բարդ գործընթաց է, որը դժվար է ապահովել մեկ անձի կամ ստորաբաժանման կողմից: Այդ նպատակով կիրառվում է բազմաշերտ մոտեցումը, որը կոչվում է «երեք գծերի» մոդել: Սա ռազմավարական մոդել է, որի շրջանակում ներքին հսկողության և ռիսկերի կառավարման պատասխանատվությունը բաշխվում է տարբեր դերակատարների միջև՝ ապահովելով ռիսկերի համակարգված և վերահսկելի կառավարումը: Այս մոդելը հատկապես կարևոր է ՓԼ/ԱՖ համատեքստում, որտեղ խաղաղույթները բարձր են, իսկ սխալի սահմանը՝ ցածր:

Ներքին հսկողության երեք գծերի մոդելը ՓԼ/ԱՖ համապեքստում

Ընդհանուր առմամբ, «երեք գծերի» մոդելը կառավարման մոդել է, որն ուղղված է կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման ռազմավարության օպտիմալացմանը: Այն ձգտում է կազմակերպության ներսում հստակեցնել ռիսկերի կառավարման հիմնական պատասխանատուների դերերը, սահմանել նրանց պարտականությունները:

Մոդելի հիմնական նպատակն է երաշխավորել, որ կազմակերպության ռիսկերն ունեն իրենց սեփականատերերը, գտնվում են պատասխանատուների ուշադրության կենտրոնում, իսկ համապատասխանության ջանքերը համակողմանի են:



Մոդելը պարզեցնում է պատասխանատուների դերերը հետևյալ երեք մակարդակներում.

Առաջին գիծը ներկայացված է առաջնագծի աշխատակիցներով, ովքեր վճռորոշ դեր ունեն ռիսկերի կառավարման գործում: Նրանց է վստահված ընթացիկ գործունեությանն առնչվող ռիսկերի բացահայտումը և կառավարումը: Նրանց ուժերի սահմանում է կասեցնել կամ նույնիսկ կանխել հնարավոր ռիսկային իրավիճակները գործառնական գործընթացներում: Նրանք գործում են որպես ընկերության ռիսկերի կառավարման ծրագրի ակտիվ դերակատար, որը պարտավոր է պահպանել վերահսկողության միջոցները և ռիսկերը նվազագույնի հասցնելու համար կիրառվող քաղաքականությունն ու ռազմավարությունը:

Աշխատակիցների ակտիվ ներգրավվածությունն օգնում է ապահովել, որ յուրաքանչյուր գործարար գործընթաց համապատասխանի ռիսկերի կառավարման ուրվագծված ռազմավարությանը:

Չնայած հիմնականում առօրյա առաջադրանքների կատարմանը, առաջին գիծը հիմնարար դեր է խաղում ռիսկի նկատմամբ զգայուն միջավայր ձևավորելու հարցում: Առաջին գծի պատասխանատուների գործողություններն են որոշում՝ արդյոք ռիսկերը կառավարելու հարցում կազմակերպության ջանքերը կհաջողվեն թե կտապալվեն:

Առաջին գծի պատասխանատուները գտնվում են գործադիր մարմնի ենթակայության տակ և հաշվետու են վերջինիս:

Երկրորդ գիծը մասնագիտացված գործառույթների գիծն է, որն ապահովում է համապատասխանությունը և ռիսկերի արդյունավետ կառավարումը: Երկրորդ գծի պարտականությունն է կազմակերպության ռիսկերի կառավարման վերաբերյալ ձևավորել ավելի ընդգրկուն պատկեր: Այս գծի խնդիրն է ուղղորդել և վերահսկել կազմակերպության առաջին գծի պատասխանատուներին, որպեսզի վերջիններս ապահովեն ընթացիկ գործունեության համապատասխանությունն օրենքներին և կարգավորումներին ու արդյունավետորեն կառավարեն ռիսկերը:

Երկրորդ գծի կարևորագույն պարտականություններից է առաջին գծին ուղղորդել՝ ռիսկերի կառավարման շրջանակի և չափորոշիչների մշակման, ընթացիկ և զարգացող միտումների պայմաններում դրանց արդիականությունն ապահովելու և խորհրդատվական աջակցություն տրամադրելու միջոցով:

Երկրորդ գծի պատասխանատուները գործում են գործադիր մարմնի ենթակայության տակ, հաշվետու են գործադիր մարմնին, սակայն չպետք է անմիջականորեն ներգրավված լինեն գործառնական գործընթացներում: Չի բացառվում նաև երկրորդ գծի հաշվետու լինելը խորհրդին:

Երկրորդ գիծը գործում է որպես միջնորդ՝ կապելով առաջին գծի պատասխանատուներին երրորդ գծի հետ: Երկրորդ գծի խնդիրների բարդությունը պահանջում է ռիսկերի և համապատասխանության խորն ըմբռնում: Նրանց դերը ոչ միայն կարևոր է, այլև՝ բարդ: Կազմակերպության ռիսկերի կառավարման տարբեր բաղադրիչներ հիմնված են երկրորդ գծի կատարողականի և արդյունավետության վրա:

Երրորդ գիծը, որը հաճախ կոչվում է ներքին աուդիտ, կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի կարևոր դերակատարն է: Այն պատասխանատու է համապատասխանության և ռիսկի կառավարման ռազմավարությունների անկախ և անաչառ վերահսկման ու գնահատման համար, ինչի արդյունքում ներկայացնում է համակարգի բարելավմանն ուղղված առաջարկներ ու խորհուրդներ:

Երրորդ գիծն ունի հավաստիացնող դերակատարում: Դրա հավաստիացումները վերաբերում են կազմակերպության ռիսկերի կառավարման արդյունավետությանն ու կարգավորման պահանջներին և կորպորատիվ չափորոշիչներին համապատասխանությանը:

Երրորդ գծի հիմնական խնդիրներն են՝

- ❖ կորպորատիվ նպատակների լույսի ներքո գնահատել կազմակերպության ռիսկերի կառավարման և համապատասխանության ջանքերը,
- ❖ կազմակերպության խորհրդին/սեփականատերերին զեկուցել ռիսկերի կառավարման արդյունավետության մասին,
- ❖ կազմակերպության ռիսկերի կառավարման և համապատասխանության շարունակական բարելավումների վերաբերյալ ներկայացնել առաջարկներ,
- ❖ ապահովել իր օբյեկտիվությունն ու զեկուցել ցանկացած միջամտության մասին,
- ❖ հավաստիացնել, որ կազմակերպության ռիսկերը կառավարվում են կարգավորման պահանջներին և կորպորատիվ չափորոշիչներին համապատասխան:

Երրորդ գիծը ներգրավված չէ կազմակերպության գործառնական գործունեության, ներառյալ՝ ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառնությունների մեջ: Այն ուղղակիորեն հաշվետու է կազմակերպության խորհրդին: Սա թույլ է տալիս նրան օբյեկտիվորեն կենտրոնանալ կազմակերպության ռիսկերի և համապատասխանության միջավայրի վրա ու դատել կազմակերպության այլ գծերի գործունեության որակի մասին:

Այսպիսով, երեք գծերի մոդելի հիմնաքարը ռիսկերի արդյունավետ կառավարումն է: Առաջին գիծը՝ կառավարումը, անմիջականորեն ներգրավված է ամենօրյա գործառնությունների մեջ, բացահայտում և կառավարում է ընթացիկ ռիսկերը: Երկրորդ գիծը՝ ռիսկը և համապատասխանությունը, ապահովում է օրենքներին և կանոնակարգերին շարունակական համապատասխանությունն ու ռիսկերի պատշաճ մոնիթորինգը: Ի վերջո, երրորդ գիծը՝ հավաստիացումը, աուդիտի միջոցով ընդգծում է համակարգի հնարավոր թերությունները և օգնում ճշգրտել ռիսկերի ընդհանուր ռազմավարությունը:

Երեք գծերի մոդելի արդյունավետությունն ապահովող տարրերն են.

- ❖ Երեք գծերի միջև պարտականությունները պետք է լինեն հստակ բաժանված և կանոնակարգված:
- ❖ Յուրաքանչյուր գիծ իր պարտականությունները պատշաճ կատարելու համար պետք է ունենա բավարար ունակություններ ու ռեսուրսներ:
- ❖ Պաշտպանության գծերի միջև պետք է գոյություն ունենա հստակ հաղորդակցում և հաշվետվողականություն. առաջին գիծը ենթակա է երկրորդ և երրորդ գծերի վերահսկմանը, երկրորդ գիծը՝ երրորդի, հակառակը հնարավոր չէ: Երկրորդն անկախ է առաջինից, իսկ երրորդը՝ առաջինից և երկրորդից:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐ ԳԾԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՓԼ/ԱՖ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ



Լ/ԱՖ ռիսկի կառավարման հարցում դերակատարում ունեն բոլոր երեք գծերի պատասխանատուները:

Առաջին գծում ՓԼ/ԱՖ պատասխանատուները գործառնական ղեկավարներն են, ինչպես նաև աշխատակիցները, ովքեր անմիջականորեն շփվում են հաճախորդների հետ:

Հաշվի առնելով, որ երկրորդ գիծը պատասխանատու է ռիսկերի մոնիթորինգի համար, կազմակերպության ռիսկերի և համապատասխանության մասնագետներն իրենց գործառույթները պատշաճ կերպով իրականացնելու համար պետք է իրազեկ լինեն ՓԼ/ԱՖ կարգավորումներից, այդ թվում՝ ներքին իրավական ակտերից:

ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցում երկրորդ գծի էական դերակատար է ՓԼ/ԱՖ համապատասխանության համար պատասխանատու աշխատակիցը կամ ներքին դիտարկումների մարմինը, որը ոչ միայն կառավարում է ՓԼ/ԱՖ համապատասխանության ռիսկը, այլև ապահովում է դրա վերաբերյալ հաղորդակցությունն ու հաշվետվողականությունը:

Ներքին դիտարկումների մարմին

Ներքին դիտարկումների մարմինն իրականացնում է հաշվետվություն տրամադրող անձի ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթները:

Ներքին դիտարկումների մարմինը կարող է ձևավորվել որպես ստորաբաժանում, կամ դրա գործառույթները կարող են պատվիրակվել առանձին աշխատակցի:

Հաշվետվություն տրամադրող անձը, որն իր գործառույթներն իրականացնում է միանձնյա, հանդիսանում է ներքին դիտարկումների մարմին:

Հաշվետվություն տրամադրող անձի ներքին դիտարկումների մարմնի գործառույթները կարող են վերապահվել մասնագիտացված գործունեություն իրականացնող անձի:

Ներքին դիտարկումների մարմնի գործառույթը կարող է լինել համատեղվող: Այս դեպքում ներքին դիտարկումների գործառույթները պետք է հստակ նկարագրված լինեն այդ ստորաբաժանման կամ աշխատակցի աշխատանքային պարտականություններում:

Բանկերի դեպքում ներքին դիտարկումների մարմնի գործառույթը չի կարող դրվել հաճախորդների հետ անմիջականորեն առնչվող աշխատակիցների և ներքին աուդիտի ստորաբաժանման կամ աշխատակցի վրա:

Ներքին դիտարկումների աշխատակցին խորհրդի համաձայնությամբ նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարը:

Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներին ներկայացվող որակական պահանջներն օրենսդրությամբ նախատեսված են միայն ֆինանսական կազմակերպությունների համար: Այսպես, աշխատակիցը պետք է ունենա՝

- ❖ բարձրագույն կրթություն կամ ՀՀ կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական,
- ❖ նշանակմանը նախորդող 10 տարիների ընթացքում առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական կամ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում:

Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների համար որակական չափանիշներ սահմանելիս անհրաժեշտ է կարևորել ՓԼ/ԱՖ կարգավորման դաշտին, ներքին իրավական ակտերին քաջատեղյակությունը, կազմակերպության և դրա գործունեության ոլորտի առանձնահատկությունների ըմբռնումը, ինչպես նաև «փափուկ» կարողությունների առկայությունը:

Ինչ վերաբերում է «չպատկանելիության չափանիշներին», ապա օրենսդրությամբ դրանք նախատեսված են ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական հաստատությունների համար: Համաձայն դրանց՝ ներքին դիտարկումների մարմնի աշխատակից չի կարող լինել անձը, ով՝

1. ունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործության համար,
2. դատարանի կողմից զրկված է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական կամ իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,
3. սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ,
4. ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

Ներքին դիտարկումների մարմինն առնվազն՝

- ❖ ապահովում է հաշվետվություն տրամադրող անձի անունից լիազոր մարմնին տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի կապը լիազոր մարմնի հետ,
- ❖ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ և պահպանում է դրանց արդյունքները,
- ❖ ապահովում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատումը,

- ❖ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու հարցը, ըստ անհրաժեշտության, քննարկում է ներքին ազդակ տրամադրած համապատասխան աշխատակցի հետ,
- ❖ վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված գործառույթների իրականացման հարցում օժանդակում և խորհրդատվություն է տրամադրում ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցներին:

Ներքին դիտարկումների մարմինը կարող է նաև՝

- ❖ մշակել ներքին իրավական ակտեր և դրանք ներկայացնել խորհրդի հաստատմանը,
- ❖ իրականացնել ներքին իրավական ակտերի արդյունավետության մոնիթորինգ և ներկայացնել առաջարկներ դրանց բարելավման վերաբերյալ:

Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել ներքին դիտարկումների մարմնի այլ գործառույթներ ևս: Բացի այդ, նա կարող է իրականացնել գործադիր մարմնի կամ խորհրդի հանձնարարած գործառույթները: Սակայն ներքին դիտարկումների մարմնին վերապահված լրացուցիչ գործառույթները չպետք է սահմանափակեն նրա անկախությունը:

Ներքին դիտարկումների մարմինն իր գործառույթներն իրականացնելիս անկախ է և պետք է ունենա հաշվետվություն տրամադրող անձի ավագ ղեկավարության կարգավիճակ:

Ներքին դիտարկումների մարմնի անկախությունը որոշող հանգամանքներից են՝

- ❖ **անմիջական հասանելիությունը խորհրդին.** հաշվետվություն տրամադրող անձի կառավարման համակարգում խորհուրդ ձևավորված լինելու դեպքում հասանելիությունը վերջինիս՝ անմիջականորեն ներկայացնելու հաշվետվություն տրամադրող անձի ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ծագած խնդիրները, մասնակցելու ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող հարցերի քննարկմանը,
- ❖ **ինքնուրույն վերջնական որոշումների կայացումը.** գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ կայացնում է որոշումներ:

Ներքին դիտարկումների մարմինն պետք է ուղղակիորեն և անմիջապես հասանելի լինեն հաշվետվություն տրամադրող անձի կողմից ձեռք բերվող ու պահպանվող տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը):

Ներքին դիտարկումների մարմինը պարբերաբար, սակայն ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է հաշվետվություն տրամադրող անձի կատարած գործարքների և հաստատած գործարար հարաբերությունների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների իրավական համապատասխանությունը: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփվում են հաշվետվության մեջ, որն առնվազն պետք է ներառի՝

1. պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը, կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,
2. այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,
3. հաշվետվություն տրամադրող անձի կասեցրած, իրականացումը մերժած կամ դադարեցրած գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը, յուրաքանչյուր կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության արժեքը,
4. սառեցված գույքի չափը,
5. հաշվետվություն տրամադրող անձի աշխատակիցների գործողությունների արդյունքում անհամապատասխանության միջադեպերը:

Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով ներքին դիտարկումների մարմնի հաշվետվությունը կարող է համալրվել այլ տեղեկություններով ևս:

Խորհուրդ ձևավորված լինելու դեպքում հաշվետվությունը հասցեագրվում է դրան, այլապես՝ գործադիր մարմնի ղեկավարին:

ԻՆՉ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ներքին աուդիտի շնորհիվ կազմակերպության խորհուրդն ու գործադիր մարմինը ստանում են անկախ և օբյեկտիվ հավաստիացումներ ու խորհուրդներ կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի, այդ թվում՝ ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման, կորպորատիվ կառավարման համակարգերի համարժեքության ու արդյունավետության վերաբերյալ, որոնք աջակցում են կազմակերպության նպատակների իրագործմանն ու գործունեության բարելավմանը:

Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտորի/ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից:

Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումն անկախ է գործադիր մարմնից:

Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողները նշանակվում են խորհրդի կողմից: Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումը հաշվետու է խորհրդին, իսկ աուդիտի հանձնաժողովի առկայության դեպքում՝ վերջինիս:

Ներքին աուդիտորի/ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողների գիտելիքներն ու հմտությունները պետք է համապատասխանեն իրենց զբաղեցրած պաշտոնին, և նրանք պետք է հստակ ըմբռնեն իրենց դերը կորպորատիվ կառավարման համակարգում:

Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումը՝

1. դիտարկում և գնահատում է կորպորատիվ քաղաքականությունների, գործընթացների, դրանց փաստաթղթավորման և հսկողական գործառույթների կիրառման համարժեքությունը և արդյունավետությունը,
2. պարբերաբար գնահատում է ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման գործառույթների արդյունավետությունը և ռիսկերին դրանց համարժեքությունը,
3. գնահատում է կազմակերպության կառավարման տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացները,
4. գնահատում է որոշումների կայացման գործընթացում օգտագործվող տեղեկատվության արժանահավատությունը,
5. ստուգում է ռիսկերի կառավարման արդյունավետությունը,
6. ստուգում է ֆինանսական հաշվետվություններում ակտիվների պատշաճ արտացոլումը և իրականացնում է կազմակերպության ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ ևս:

ՓԼ/ԱՖ տեսանկյունից ներքին աուդիտն անհրաժեշտ է, որպեսզի հաշվետվություն տրամադրող անձը հավաստիանա ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իր գործունեության իրավական համապատասխանության մեջ:

Հաշվետվություն տրամադրող անձը ներքին աուդիտորի/ներքին աուդիտի ստորաբաժանման տարեկան ծրագրով պետք է նախատեսի ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավական համապատասխանությունն ուսումնասիրելու պահանջ:

ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներքին աուդիտորի/ներքին աուդիտի ստորաբաժանման եզրահանգումները, այդ թվում՝ ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարման հաշվետվության համապատասխան բաժինը, խորհրդի կողմից հաստատելուց հետո մեկշաբաթյա ժամկետում ներկայացվում են լիազոր մարմին:

Եթե հաշվետվություն տրամադրող անձի համար օրենսդրությամբ սահմանված չէ ներքին աուդիտի գործառույթ ունենալու պարտականություն, հաշվետվություն տրամադրող անձը պետք է ներքին իրավական ակտերով սահմանի ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու կարգ և հաճախականություն:

ԻՆՉ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ՈՒՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Արտաքին աուդիտն անաչառորեն ու օբյեկտիվորեն գնահատում է կազմակերպության ՓԼ/ԱՖ կառուցակարգերի համապատասխանությունն ու արդյունավետությունը:

Եթե հաշվետվություն տրամադրող անձն օրենսդրորեն ունի արտաքին աուդիտ հրավիրելու պարտականություն, արտաքին աուդիտ իրականացնելիս պետք է ուսումնասիրվեն նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջների ներդրումը և դրանց կատարման արդյունավետությունը:

Ֆինանսական հաստատությունները ենթակա են պարտադիր աուդիտի:

Ինչ վերաբերում է ոչ ֆինանսական հաստատություններին, ապա համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ պարտադիր աուդիտի են ենթակա այդ օրենքի իմաստով՝

- ❖ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները.
- ❖ միջին կազմակերպությունները.
- ❖ խումբը, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է, և խոշոր խմբերը.
- ❖ միջին խմբերը:

Արտաքին աուդիտի պահանջ կարող է առաջադրել նաև լիազոր մարմինը, եթե հաշվետվություն տրամադրող անձը պարբերաբար խախտում է օրենսդրության պահանջները կամ ծավալում է ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի չափանիշներով բնութագրվող գործունեություն:

Լիազոր մարմնի պահանջը ստանալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը մեկամսյա ժամկետում հրավիրում է արտաքին աուդիտ, որի եզրակացությունը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում տրամադրում է լիազոր մարմնին:

ԻՆՉՊԵՐՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՓԼ/ԱՖ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

U ովորաբար կազմակերպությունների ռեսուրսները սահմանափակ են, իսկ ռիսկերը՝ բազմաթիվ:

Ռիսկերի գնահատումը հնարավորություն է տալիս ոչ միայն բացահայտել կազմակերպությանը ներհատուկ ռիսկերը, այլև դրանցում սահմանել առաջնահերթություն և ռեսուրսները կենտրոնացնել առավել խնդրահարույցների վրա:

Բացի այդ՝ ռիսկերի գնահատման արդյունքում կարող են բացահայտվել դրանք կառավարելու կառուցակարգերը, ինչպես նաև նախանշվել ռիսկերի նույնականացման, արդյունավետ կառավարման և զսպման քաղաքականություններն ու ընթացակարգերը:

Այդ նպատակով ՓԼ/ԱՖ ոլորտում կանխարգելման իրենց կառուցակարգերը ձևավորելիս հաշվետվություն տրամադրող անձինք պետք է հիմնվեն ռիսկահեն մոտեցման վրա: Այս մոտեցման առումով բացառություն են կազմում մինչև 10 աշխատակից ունեցող ոչ ֆինանսական հաշվետու անձինք, որոնց վրա մոտեցումը չի տարածվում:

ՓԼ/ԱՖ ոլորտում ռիսկը ՓԼ/ԱՖ վտանգավորության և հավանականության մասին վկայող հանգամանք է: Ռիսկը գնահատվում է ըստ ռիսկը բնութագրող չափանիշի, որոնց թվում են՝

- ❖ երկիրը կամ աշխարհագրական տեղակայումը,
- ❖ հաճախորդների տեսակը,
- ❖ գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակը,
- ❖ ծառայությունների տեսակը կամ այլ չափանիշներ:

Մեկից ավելի չափանիշների առկայության դեպքում ռիսկը գնահատվում է դրանց համակցությամբ:

Ռիսկի չափանիշները սահմանվում են օրենսդրությամբ և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել միայն բարձր ռիսկի լրացուցիչ չափանիշներ:

ՓԼ/ԱՖ ռիսկերը գնահատվում և դասակարգվում են ցածր, միջին (ստանդարտ), բարձր ռիսկերի.

Ցածր ռիսկ	Առկա են միայն ցածր ռիսկի չափանիշներ: Առկա է որևէ բարձր ռիսկի չափանիշ, սակայն կատարվում է ցածր ռիսկի չափանիշով գործարք՝ պայմանով, որ հանրային ծառայությունների դիմաց կամ աշխատավարձի կամ կենսաթոշակի կամ սոցիալական նպաստի վճարման դեպքում վերջինիս գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:
Միջին (ստանդարտ) ռիսկ	Բացակայում են բարձր կամ ցածր ռիսկի չափանիշները: Իրականացվում է առանց առերես շփման գործարք, սակայն իրականացվում է ռիսկերի արդյունավետ կառավարում:
Բարձր ռիսկ	Առկա է բարձր ռիսկի թեկուզ մեկ չափանիշ, բացառությամբ եթե՝ ❖ կատարվում է ցածր ռիսկի չափանիշով գործարք՝ պայմանով, որ հանրային ծառայությունների դիմաց կամ աշխատավարձի կամ կենսաթոշակի կամ սոցիալական նպաստի վճարման դեպքում վերջինիս գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը, ❖ իրականացվում է առանց առերես շփման գործարք, սակայն իրականացվում է ռիսկերի արդյունավետ կառավարում:

Ցածր ռիսկի չափանիշը վկայում է ՓԼ/ԱՖ ցածր հավանականության մասին:

Ցածր ռիսկի չափանիշներ

Հաճախորդի	Գործարքի
❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատություններ, ❖ պետական մարմիններ, ❖ տեղական ինքնակառավարման մարմիններ, ❖ պետական ոչ առևտրային կազմակերպություններ, ❖ համայնքային կառավարչական հիմնարկներ: <i>Բացառություն են կազմում չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինները կամ կազմակերպությունները:</i>	❖ ՀՀ պետական կամ համայնքային բյուջե կատարվող վճարումներ, ❖ հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարումներ, ❖ աշխատավարձի, կենսաթոշակի կամ սոցիալական նպաստների հետ կապված վճարումներ, ❖ կյանքի ապահովագրության պայմանագրեր, եթե տարեկան ապահովագրավճարը չի գերազանցում 400000 ՀՀ դրամը կամ միանվագ ապահովագրավճարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը, ❖ կենսաթոշակային համակարգերի շրջանակում կնքված ապահովագրական պայմանագրեր, եթե դրանք չեն պարունակում հրաժարման մասին դրույթ, և պայմանագիրը չի կարող օգտագործվել որպես գրավի առարկա:

Բարձր ռիսկի չափանիշը վկայում է ՓԼ/ԱՖ բարձր հավանականության մասին:

Բարձր ռիսկի չափանիշներ

Երկրի կամ աշխարհագրական տարածքի ռիսկ. դիտարկվում են գործունեության իրականացման աշխարհագրական վայրը, հաճախորդների, կոնտրագենտների գտնվելու և/կամ գործունեության երկրները:	
Կանխարգելիչ համակարգի հետ կապված չափանիշներ (օրինակ՝ ըստ հավաստի աղբյուրների (ՖԱԹՖ, ՀԲ, ԱՄՀ, Էգմոնտ խումբ և այլն) կողմից հրապարակված տվյալների՝ երկրում բացակայում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգերը կամ կան ռազմավարական բացեր)	Համատեքստային այլ գործոնների հետ կապված չափանիշներ (օրինակ՝ ըստ հավաստի աղբյուրների (Թրանսփարենսի Ինթերնեշնլ, ԳՐԵԿՈ) կողմից հրապարակված տվյալների՝ երկրում առկա է կոռուպցիայի և այլ հանցավորության բարձր մակարդակ և/կամ մեծ ծավալներ
Հաճախորդի, գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկ. դիտարկվում են հաճախորդներն ու նրանց հետ ունեցած գործարար հարաբերությունները:	
Հաճախորդի ինքնության և կարգավիճակի հետ կապված չափանիշներ (օրինակ՝ ոչ ռեզիդենտ հաճախորդ, որի՝ հայաստանյան ֆինանսական կամ այլ համակարգից օգտվելու տնտեսական կամ այլ իրավաչափ պատճառներն ակնհայտ չեն, ֆինանսական հաստատություն, որը ենթակա չէ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետ հսկողության, քաղաքական ազդեցություն ունեցող անձինք, նրանց ընտանիքի անդամները, նրանց հետ փոխկապակցված անձինք)	Հաճախորդների գործարար բնութագրի և համբավի հետ կապված չափանիշներ (օրինակ՝ կոռուպցիոն հանցագործությունների, հանրային միջոցների վատնման, դիտավորությամբ կատարված ծանր հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկված (ենթարկման փուլում գտնվող) հաճախորդներ)

Այլ բովանդակային և իրավիճակային չափանիշներ (օրինակ՝ սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կառուցվածք)	
Պրոդուկտի, ծառայության կամ մատուցման եղանակի ռիսկ. դիտարկվում են պրոդուկտների և ծառայությունների տեսակները և դրանց մատուցման եղանակները:	
Պրոդուկտի կամ ծառայության տեսակի հետ կապված չափանիշներ (օրինակ՝ անհայտ կամ երրորդ անձանցից վճարումների ստացում թույլատրող պրոդուկտներ, գործարքների մասնակիցների անանունությունն ապահովող պրոդուկտներ)	Պրոդուկտի կամ ծառայության մատուցման եղանակի հետ կապված չափանիշներ (օրինակ՝ առանց առերես շփման (այդ թվում՝ առցանց) ծառայություններ, բացառապես ինտերնետի, հեռախոսի, էլեկտրոնային փոստի և կապի այլ միջոցներով մատուցվող ծառայություններ)

Հաշվետվություն տրամադրող անձինք պետք է պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ վերանայեն իրենց ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը:

Հաշվետվություն տրամադրող անձինք, ի թիվս ՓԼ/ԱՖ այլ ռիսկերի, պետք է բացահայտեն և գնահատեն ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր, կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:

ԻՆՉՊԵՐՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ



աճախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ *«Ճանաչի՛ր հաճախորդիդ»* (KYC) ընթացակարգն էական է հաճախորդների ռիսկը գնահատելու և ՓԼ/ԱՖ օրենսդրական պահանջներին համապատասխանելու համար:

Այն անհրաժեշտ է հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու համար և իրենից ենթադրում է հաճախորդի ինքնության ու նրա գործարար բնութագրի վերաբերյալ տեղեկությունների ու փաստաթղթերի հավաքագրման ու վերլուծության գործընթաց, որը ներառում է՝

1. հաճախորդի, այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի նույնականացում և ինքնության ստուգում,
2. գործարքի (գործարար հարաբերության) նպատակի և նախատեսվող բնույթի պարզում,
3. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն:

Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացնում է՝

- ❖ գործարար հարաբերություն հաստատելիս,
- ❖ միանգամյա գործարք (փոխկապակցված միանգամյա գործարքներ), այդ թվում՝ տեղական կամ միջազգային դրամական փոխանցում կատարելիս, որի գումարը հավասար է կամ գերազանցում է 400000 ՀՀ դրամը,
- ❖ հաճախորդի նույնականացմանը վերաբերող, նախկինում ձեռք բերված տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ կասկածներ ծագելիս,
- ❖ ՓԼ/ԱՖ վերաբերյալ կասկածներ առաջանալիս:

1. Հաճախորդի նույնականացում և ինքնության ստուգում

Հաճախորդի նույնականացումը և ինքնության ստուգումը կատարվում է փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային մեթոդների կամ դրանց համակցման միջոցով:

Փաստաթղթային մեթոդով հաճախորդի նույնականացումը և ինքնության ստուգումը կատարվում է հետևյալ փաստաթղթերի ու տվյալների հիման վրա.

Ֆիզիկական անձ	Իրավաբանական անձ
- անձը հաստատող փաստաթղթի կամ լուսանկարով այլ փաստաթղթի ստուգում, - նույնականացնող տեղեկությունների հավաքագրում. ❖ անուն, ազգանուն, ❖ քաղաքացիություն, ❖ հաշվառման հասցե (եթե առկա է), ❖ ծննդյան տարի, ամիս, ամսաթիվ, վայր, ❖ անձը հաստատող փաստաթղթի սերիա/համար, տրամադրման ամսաթիվ, ❖ հաշվառման համար և ՀՎՀՀ (Ա/Ձ հաճախորդի դեպքում) ❖ բնակության վայր	- պետական գրանցման կամ համարժեք այլ փաստաթղթի ստուգում - նույնականացնող տեղեկությունների (փաստաթղթերի) հավաքագրում. ❖ անվանում ❖ գտնվելու/գործունեության վայր, ❖ կանոնադրություն, ❖ պետական գրանցման համար, ❖ ՀՎՀՀ, ❖ գործադիր ղեկավարի անուն, ազգանուն - իրավաբանական անձի մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ տեղեկության հավաքագրում և վերլուծություն

Հաշվետվություն տրամադրող անձը պետք է նույն կարգով, ինչ նախատեսված է հաճախորդի համար, նույնականացնի նաև լիազորված անձին (առկայության դեպքում) և ստուգի լիազորագրի ու համապատասխան լիազորության առկայությունը:

Հաշվետվություն տրամադրող անձը պետք է պարզի գործարքում իրական շահառուի առկայությունը և ողջամիտ քայլեր ձեռնարկի նրա ինքնությունը ստուգելու նպատակով: Իրական շահառուի առկայությունը պարզելիս լրացվում է «Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ» հայտարարություն, որի ձևը սահմանում է ՀՀ ԿԲ-ն:

Իրական շահառուն ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է կամ գործարար հարաբերությունը հաստատվում է:

Իրավաբանական անձի իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

- ա.** ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,
- բ.** տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
- գ.** հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «**ա**» և «**բ**» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

2. Հաճախորդի գործարար բնութագրի պարզում

Հաշվետվություն տրամադրող անձը պետք է ընկալի հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ձեռք բերի տեղեկություններ գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին:


Հաճախորդի գործարար բնութագիրը պարզելու համար հաշվետվություն տրամադրող անձը պետք է ուսումնասիրի հաճախորդի գործունեության բնույթը, ազդեցությունն ու նշանակությունը, գործարար հարաբերությունների և գործարքների առկա ու ակնկալվող շարժը, ծավալները և ոլորտները, լիազորված անձանց և իրական շահառուների առկայությունը, ինքնությունն ու փոխկապակցվածության բնույթը: Ձեռք բերված տվյալները անհրաժեշտ է համադրել այլ աղբյուրներից ստացվող փաստերի և հանգամանքների հետ:

3. Գործարար հարաբերության ընթացիկ պարզաճ ուսումնասիրություն

Բավական չէ միայն մեկ անգամ ստուգել հաճախորդին և նրա հետ գործարար հարաբերությունները: Այդ գործընթացը պետք է կատարվի շարունակական հիմունքներով և ներառի՝

1. հաճախորդից պահանջվող փաստաթղթերի իսկության և հավաստիության ստուգում և թարմացում՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության այլ աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, օտարերկրյա գործընկերներին,
2. միավոր ժամանակահատվածում հաճախորդի տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրների, շարժի և ծավալների համադրում,
3. տարբեր հաճախորդների և գործարքների միջև կապերի առկայության ստուգում,
4. գործարքների և հաճախորդի գործարար բնութագրի համադրելիության ստուգում,
5. որոշակի դեպքերում՝ եկամուտների և ունեցվածքի աղբյուրի ստուգում:

ՓԼ/ԱՖ ռիսկերով պայմանավորված՝ տարբերվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության երեք մակարդակ.



ՓԼ/ԱՖ ցածր ռիսկի դեպքում կատարվում է հաճախորդի պարզեցված պատշաճ ուսումնասիրություն:

Հաճախորդին նույնականացնելիս և ինքնությունը ստուգելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները.

- ❖ ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
- ❖ իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն):

Հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն չի կարող իրականացվել, եթե գործարքում առկա է բարձր ռիսկի կամ կասկածելիության թեկուզ մեկ չափանիշ:

ՓԼ/ԱՖ ցածր ռիսկի դեպքում ձեռնարկվում են ընթացիկ պատշաճ ուսումնասիրության նվազեցված միջոցառումներ.

1. ստուգվում է գործարքի առնչությամբ պահանջվող տեղեկությունների (փաստաթղթերի) իսկությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,

2. համադրվում են միավոր ժամանակահատվածում հաճախորդի տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,
3. հաճախորդների և գործարքների միջև կապերի առկայությունը ստուգվում է միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին կամ բարձր ռիսկի հաճախորդների կամ գործարքների հետ կապեր:

Հաճախորդից ձեռք բերված տեղեկությունները ցածր ռիսկի դեպքում թարմացվում են առնվազն երկու տարին մեկ անգամ:

ՓԼ/ԱՖ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում կատարվում է հաճախորդի ստանդարտ պատշաճ ուսումնասիրություն:

ՓԼ/ԱՖ միջին ռիսկի դեպքում հաշվետվություն տրամադրող անձը ձեռնարկում է ընթացիկ պատշաճ ուսումնասիրության հետևյալ միջոցառումները.

1. գործարքի առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը ստուգելիս օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավորինս մեծ թվով իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
2. համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,
3. պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,
4. ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,
5. ներքին իրավական ակտով սահմանված դեպքում պարզում է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը,
6. ձեռնարկում է ներքին իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումներ:

Միջին ռիսկի դեպքում ընթացիկ դիտանցման միջոցառումներն առնվազն իրականացվում են տարին մեկ անգամ:

Հաճախորդից ձեռք բերված տեղեկությունները միջին ռիսկի դեպքում թարմացվում են առնվազն տարին մեկ անգամ:

ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի դեպքում կատարվում է հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն:

Հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառումն է:

Ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, այս դեպքում առնվազն կատարվում են հետևյալ գործողությունները.

- ❖ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու և շարունակելու նպատակով, ինչպես նաև, երբ պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում է այդպիսի չափանիշ, հաշվետվություն տրամադրող անձի ավագ ղեկավարության հավանության ստացում,
- ❖ հաճախորդի, ինչպես նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար միջոցառումների ձեռնարկում,
- ❖ գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանների և նպատակի հնարավորինս մանրամասն ուսումնասիրում,
- ❖ քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում՝ ընթացիկ հավելյալ դիտարկման իրականացում:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձը պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

- ❖ պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,
- ❖ խորհրդարանի անդամները,
- ❖ բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

- ❖ կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,
- ❖ դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,
- ❖ քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,
- ❖ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,
- ❖ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,
- ❖ միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները:

Հավելյալ ուսումնասիրություն իրականացվում է նաև այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության ընթացքում բացահայտվում կամ ի հայտ է գալիս բարձր ռիսկի չափանիշ:

ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի դեպքում գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով հաշվետվություն տրամադրող անձը ձեռնարկում է հետևյալ խորացված միջոցառումները.

1. գործարքի առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր),
2. օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավորինս մեծ թվով իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
3. հաճախորդի՝ տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորինս ավելի երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,
4. հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,

5. հաճախորդի գործարար բնութագրին որևէ գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),
6. հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելիս պահանջում է դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),
7. ձեռնարկում է իր ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործողություններ:

Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում դիտանցումը կատարվում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում:

Ընթացիկ դիտանցման խորացված միջոցառումներն իրականացվում են առնվազն տարեկան, իսկ 2-րդ և 3-րդ միջոցառումներն ու հաճախորդից ձեռքբերված տեղեկությունների թարմացումը՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ: Բացառություն են կազմում քաղաքական ազդեցություն ունեցող հաճախորդները, որոնց դեպքում ընթացիկ դիտանցման խորացված բոլոր միջոցառումներն իրականացվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

ԻՆՉՊԵՐՍ Է ԲԱՅԱՀԱՅՏՎՈՒՄ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԸ

Գործարքը կամ գործարար հարաբերությունը (այդ թվում՝ դրա կատարման կամ հաստատման փորձը) համարվում է կասկածելի, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ համապատասխան գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

Հաշվետվություն տրամադրող անձը պետք է դիտարկի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու հարցը, եթե՝

- ❖ առկա է կասկածելիության չափանիշ (տիպաբանություն), կամ
- ❖ հաշվետվություն տրամադրող անձի համար ակնհայտ է դառնում, որ (չնայած կասկածելիության չափանիշների առերևույթ բացակայությանը) գործարքի կատարման տրամաբանությունը, դինամիկան կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել ՓԼ/ԱՖ նպատակներով:

Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշները սահմանվում են ՀՀ ԿԲ իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով: Դրանք ՓԼ/ԱՖ հնարավորության մասին վկայող ազդակ են:

Կասկածելիության չափանիշներ

Հաճախորդի բնութագրի տեսանկյունից կասկածելիությունը

Հաճախորդի ինքնության և կարգավիճակի հետ կապված չափանիշներ (օրինակ՝ հաճախորդը ցանկանում է մնալ անանուն կամ հնարավորինս նվազեցնել ներկայացվող տեղեկությունների ծավալը, հաճախորդը փորձում է ստանալ անվերապահ երաշխիքներ գործարքի գաղտնիությունն ապահովելու վերաբերյալ, հաճախորդը դեպքից դեպք ներկայացնում է անձը հաստատող տարբեր փաստաթղթեր)

Հաճախորդի գործելակերպի և վարքագծի հետ կապված չափանիշներ, այդ թվում՝

Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և այլ կանխարգելիչ միջոցառումները շրջանցելուն միտված գործողություններ (օրինակ՝ հաճախորդը մասնատված գործարքներ է կատարում պարտադիր տեղեկացման սահմանաչափերը չգերազանցելու նպատակով, հաճախորդը նվազեցնում է գործարքի՝ ի սկզբանե նախատեսված գումարը հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումների ենթակա չդառնալու համար)	Արտասովոր և կասկածահարույց գործողություններ (օրինակ՝ հաճախորդին գործարք կնքելու ժամանակ ուղեկցում են այլ անձինք, որոնց ցուցումներին հետևում է հաճախորդը, հաճախորդը սպասարկող անձնակազմի հետ շփումներում նյարդային և դյուրագրգիռ վարքագիծ է դրսևորում, հաճախորդն ակնհայտ ջանքեր է գործադրում իր պատասխանները համոզիչ դարձնելու համար)
Գործարքի կամ գործարար հարաբերության բնութագրերի տեսանկյունից կասկածելիությունը	
Գործարքի կամ գործարար հարաբերության բնույթի հետ կապված չափանիշներ (օրինակ՝ տվյալ ոլորտում կիրառվող գործարար շրջանառության սովորույթներին չհամապատասխանող գործարք, տվյալ հաճախորդի համար տնտեսապես ակնհայտ չարդարացված գործարք)	
Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակի հետ կապված չափանիշներ, այդ թվում՝	
Կանխիկի օգտագործմամբ գործառնություններ (օրինակ՝ հաճախորդը հաճախակի մեծ գումարով կանխիկ գործարքներ է կատարում, ինչը չի համապատասխանում նրա գործարար բնութագրին, փոխանակում է փոքր անվանական արժեքով թղթադրամները մեծ անվանական արժեքով թղթադրամներով)	
Հաշիվներով գործառնություններ (օրինակ՝ հաճախորդի հաշվով շարժերը չեն համապատասխանում նրա գործարար բնութագրին, հաճախորդի հաշվին մուտքագրվում և հաշվից ելքագրվում են գումարներ առանց որևէ ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ հիմնավորման)	

Դրամական փոխանցումներ (օրինակ՝ հաճախորդը փոխանցումներ է կատարում և ստանում չհամապատասխանող կամ բարձր ռիսկային երկրում գտնվող հաշիվներին/հաշիվներից)

Ավանդային և վարկային գործառնություններ (օրինակ՝ հաճախորդը հաճախակիորեն ավանդներ է ներդնում՝ դրանք ներկայացնելով որպես ակտիվների վաճառքից գոյացած միջոցներ)

Գործարքներում օգտագործվող պրոդուկտի կամ գործարքի կատարման եղանակի հետ կապված չափանիշներ (օրինակ՝ գործարքում ճանապարհային կամ երրորդ անձի անունով դուրս գրված չեկերի, երրորդ անձին պատկանող դեբետային կամ կրեդիտային քարտերի օգտագործում, առցանց գործարքներ, որոնց նպատակը հասկանալի և հստակ չէ)

Գործարքը կասկածելի որակելու գործընթացն իրականացվում է ներքին դիտարկումների մարմնի կողմից, երբ՝

1. առկա է հնարավոր համընկնում հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց նույնականացման տվյալների միջև,
2. դիտարկվող իրավիճակը ներառում է կասկածելիության չափանիշ (տիպաբանություն),
3. կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել ՓԼ/ԱՖ նպատակով.
4. առկա են ներքին իրավական ակտերով սահմանված գործարքի կասկածելիության այլ չափանիշներ:

Գործընթացի մեկնարկի համար հիմք են հանդիսանում՝

Ներքին ազդակները՝ հաճախորդներին սպասարկող աշխատակիցների, բանկի կառավարման մարմինների, ներքին աուդիտի կամ ՓԼ/ԱՖ ոլորտում այլ պատասխանատու աշխատակիցների կողմից փոխանցված ազդակները,

Արտաքին ազդակներ՝ ՀՀ ԿԲ-ից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:

Գործընթացը կարող է մեկնարկել ներքին դիտարկումների մարմնի սեփական նախաձեռնությամբ:

Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացի շրջանակներում ներքին դիտարկումների մարմինը՝

- ❖ հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալները համադրում է ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված կամ ՀՀ ԿԲ հանձնարարականներում նշված անձանց տվյալների հետ,
- ❖ նախաձեռնում է համակողմանի վերլուծություն՝ օգտվելով հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկություններից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում ՖԴԿ-ի հետ:

Եթե վերլուծության արդյունքում չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում՝

- ❖ գործարքը կամ գործարար հարաբերությունը որակվում է կասկածելի,
- ❖ կասկածելի գործարքի մասին հաշվետվություն է ներկայացվում ՀՀ ԿԲ,
- ❖ եթե առկա է տվյալների համընկնում ահաբեկչության ֆինանսավորման կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց տվյալների հետ, հաճախորդի գույքը սառեցվում է, իսկ ծառայությունը՝ կասեցվում,
- ❖ եթե առկա է տվյալների համընկնում ՀՀ ԿԲ հանձնարարականներում նշված անձանց տվյալների հետ, կատարվում են հանձնարարականում սահմանված գործողությունները:

Եթե վերլուծության արդյունքում ներքին դիտարկումների մարմինը գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակում, և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրում ՀՀ ԿԲ, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում ու պահպանվում են:

ԻՆՉՊԵՐՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Գ

ործարքի կատարումից կամ գործարար հարաբերության ավարտից առնվազն 5 տարվա ընթացքում հաշվետվություն տրամադրող անձը պահպանում է՝

- ❖ հաճախորդի նույնականացման տվյալները,
- ❖ գործարքների վերաբերյալ տվյալները, որոնք բավարար կլինեն գործարքի ամբողջական պատկերը վերականգնելու համար, այդ թվում՝ գործարքի մյուս կողմի անունը, ազգանունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում), բնակության/գտնվելու վայրը, գործարքի բնույթը, կատարման ժամկետը, գումարը և արժույթը, առկայության դեպքում նաև՝ հաշվի տեսակը և հաշվեհամարը,
- ❖ կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունները,
- ❖ կասկածելի չորակված գործարքների առնչությամբ կատարված վերլուծության և դրա արդյունքների վերաբերյալ տեղեկությունները,
- ❖ ՓԼ/ԱՖ ռիսկերի, այդ թվում՝ ծառայության նոր տեսակների մատուցման, նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունքները,
- ❖ դրամական փոխանցումների վերաբերյալ տեղեկությունները:

Տեղեկությունները և փաստաթղթերը կարող են պահպանվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Տեղեկությունները և փաստաթղթերը պետք է հաշվառվեն: Հաշվառումը պետք է կատարվի այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի վերականգնել այն աշխատակցի տվյալները, ով իրականացրել է հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ պահպանման ենթակա տեղեկությունների և փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված այլ գործողությունները:

Հաշվետվություն տրամադրող անձը պետք է ապահովի պահպանվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) անվտանգությունը և գաղտնիությունը:

Հաշվետվություն տրամադրող անձն Օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է ՀՀ ԿԲ-ին փոխանցել ՓԼ/ԱՖ վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

Նոտարները, փաստաբանները, իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, աուդիտորական կազմակերպությունները և աուդիտորները գաղտնիք հանդիսացող տեղեկությունները փոխանցում են ՀՀ ԿԲ, եթե դա չի հակասում իրենց գործունեությունը կարգավորող օրենքներով սահմանված գաղտնիքի պահպանման պահանջին:

Ոչ ֆինանսական այդ հաստատությունների կամ անձանց նկատմամբ Օրենքով սահմանված գաղտնիքի պահպանման պահանջը կարող է կիրառվել միայն այնպիսի տեղեկությունների դեպքում, որոնք ստացվել են հաճախորդից կամ այլ աղբյուրներից՝ դատական, վարչական, արբիտրաժային կամ միջնորդային վարույթում հաճախորդին պաշտպանելու կամ նրա շահերը ներկայացնելու հետ կապված, ինչպես նաև իրավական խորհրդատվություն տրամադրելիս: Բացառություն է կազմում ՓԼ/ԱՖ նպատակով խորհրդատվության մատուցումը:

ԵՐԲ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՓԼ/ԱՖ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



աշվետվություն տրամադրող անձը ՀՀ ԿԲ հաշվետվություն է ներկայացնում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության և (կամ) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ:

Կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ	Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներ կամ գործարար հարաբերություններ
Անկախ գործարքի չափից՝ հաշվետվություն են ներկայացնում բոլոր հաշվետվություն տրամադրող անձինք, բացառությամբ թանկարժեք մետաղների և քարերի դիլերների, որոնք հաշվետվություն են ներկայացնում, եթե կանխիկ գործարքի գումարը հավասար է կամ գերազանցում է 5 մլն ՀՀ դրամը:	Ֆինանսական հաստատությունների դեպքում՝ ❖ անկանխիկ գործարքները, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 մլն ՀՀ դրամը, ❖ կանխիկի հետ կապված գործարքները, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 մլն ՀՀ դրամը: Նոտարների, խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպիչների, իրավաբանական անձանց գրանցող պետական մարմնի (պետական ռեգիստր), անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազոր մարմնի դեպքում՝ ❖ գործարքները, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 մլն ՀՀ դրամը,

❖ **անշարժ գույքի առուվաճառքի գործարքները**, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 50 մլն ՀՀ դրամը:

Ոչ ֆինանսական հաստատությունների նկատմամբ հաշվետվության տրամադրման պարտականությունը տարածվում է այն գործարքների մասով, որոնց համար սահմանված է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պարտավորություն, ընդ որում՝ խաղատների և շահումով խաղերի կազմակերպիչների համար սահմանված 1 միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը չի գործում կասկածելի գործարքների դեպքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (Վիեննայի կոնվենցիա), 1988թ.
2. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստրասբուրգի կոնվենցիա), 1990թ.
3. «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (Նյու Յորքի կոնվենցիա), 1999թ.
4. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա (Պալերմոյի կոնվենցիա), 2000թ.
5. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Վարշավայի կոնվենցիա), 2005թ.
6. ՖԱԹՖ հանձնարարականներ. Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ, փետրվար, 2012թ.
7. ՀՀ քրեական օրենսգիրք
8. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
9. ԿԲ մասին ՀՀ օրենք
10. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին ՀՀ օրենք
11. ՀՀ ԿԲ խորհրդի 2014թ.-ի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշմամբ հաստատված Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ
12. ՀՀ ԿԲ խորհրդի 2014թ.-ի հոկտեմբերի 10-ի թիվ 280-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին ՀՀ օրենքով նախատեսված հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման կարգ
13. ՀՀ ԿԲ նախագահի 2016թ.-ի հոկտեմբերի 11-ի թիվ 1/711-Ա որոշմամբ հաստատված Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ ուղեցույց

14. Ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ ուղեցույց, 2025թ.
15. «ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2023թ.-ի մարտի 2-ի նիստում հաստատված Փողերի լվացման գործերի քննության ուղեցույց
16. Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոն, Օքսֆորդ. Անալիտիկա Հիմնադրամ, «Կառուցողական կապիտալի հայեցակարգ. ներդրումներ, բարեվարքություն, ազդեցություն», 2022թ.
17. [The IIA's Three Lines Model: An Update of the Three Lines of Defense. Position Paper.](#) 2020
18. [Basel Institute on Governance. Basel AML Index 2024: 13th Public Edition](#)
19. IMF Policy Paper. [Review of the fund's anti-money laundering and combating the financing of terrorism strategy.](#) December 2023
20. В. А. Григорьевич. Финансовые механизмы легализации (отмывания) денежных средств, полученных преступным путем, связанные с их переводом за границу. Банковское право № 3/2012
21. ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ/ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բաժին
22. Trulioo. [KYC: 3 Steps to Achieving Know Your Customer Compliance](#)
23. [KYC360 webpage](#)
24. YouVerify. [Global AML/CFT Legislation](#)
25. AML UAE. [Role-Specific AML/CFT/CPF Compliance Training](#)
26. Focal. [What are the Five Pillars of AML Compliance? Key Principles.](#) July 2024

